«Մասնակցային մոնիթորինգ հանուն խելացի համայնքների ստեղծման Հայաստանում» Ծրագրի

Վեց խոշորացված համայնքների բյուջեների ֆինանսական վերլուծություն:

«Մասնակցային մոնիթորինգ հանուն խելացի համայնքների ստեղծման Հայաստանում» ծրագիրն իրականացվում է « «Կոմպասս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն» հասարակական կազմակերպությունը՝ իր գործընկերներ «ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ-ի, «Դիլիջանի երիտասարդների համագործակցության կենտրոն» ՀԿ-ի և «Տեղեկատվական համակարգերի զարգացման եվ վերապատրաստման կենտրոն» ՀԿ-ի հետ համատեղ՝
«Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողականերկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված է նթադրամաշնորհի շրջանակներում:
«Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միությանկողմից:

Փաստաթղթի բովանդակության համար պատասխանատու է միայն ծրագիրն իրականացնողկոնսորցիումը և այն որևէ կերպ չի արտահայտում Եվրոպական միության պաշտոնական տեսակետները:

Բովանդակություն

Ներածություն 4
1.1 Ախուրյան համայնք 7
1.2 Աշոցք համայնք 19
Գլուխ 2 Տավուշի մարզում խոշորացված Դիլիջան և Նոյեմբերյան համայնքներում 2014-2018 թթ ֆինանսական վերլուծություն՝ աղբահանության, լուսավորության և ճանապարհաշինության ոլորտներում 29
2.1 Դիլիջան համայնք 29
2.2 Նոյեմբերյան համայնք 39
Գլուխ 3 Լոռու մարզում խոշորացված Ստեփանավան և Թումանյան համայնքներում 2014-2018 թթ ֆինանսական վերլուծություն՝ աղբահանության, լուսավորության և ճանապարհաշինության ոլորտներում 50
3.1 Ստեփանավան համայնք 50
3.2 Թումանյան համայնք 59
Եզրակացություն և առաջարկություններ 68

Ներածություն

«Մասնակցային մոնիթորինգ՝ հանուն խելացի համայնքների ստեղծման Հայաստանում» ծրագրի շրջանակներում 2018թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին Հայաստանի 3 մարզերի 6 խոշորացված համայնքներում իրականացվել է հետազոտություն, որն ուղղված է համայնքային մի շարք ծառայությունների որակի գնահատմանը: Հետազոտությունն իրականացվել է «Կոմպասս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն ՀԿ-ի կողմից, որում կոնսորցիումի ցանցի միջոցով ներգրավված են եղել «ՀԿ Կենտրոն», «Դիլիջանի երիտասարդների համագործակցության կենտրոն» և «Տեղեկատվական համակարգերի զարգացման եվ վերապատրաստման կենտրոն» գործընկեր հասարակական կազմակերպությունները: Ծրագրում ներառված 3 մարզերն են Շիրակը, Լոռին, Տավուշը, որոնցից յուրաքանչյուրում համապատասխանաբար ընտրվել են երկու խոշորացված համայնքներ. Շիրակի մարզում՝ Ախուրյանը և Աշոցքը, Լոռվա մարզում՝ Ստեփանավանը և Թումանյանը, Տավուշի մարզում՝ Դիլիջանը և Նոյեմբերյանը: Հետազոտությունն ուղղված է եղել ընտրված համայնքներում համայնքապետարանների կողմից մատուցվող ներհամայնքային ճանապարհների սպասարկման, աղբահանության իրականացման և փողոցային լուսավորության ապահովման ծառայությունների որակի գնահատմանը: Սույն վերլուծական հաշվետվությունն ամփոփում է 6 խոշորացված համայնքներում վերոնշյալ ոլորտներում իրականացվող ծախսերի վերլուծությունը, համայնքներում ստեղծվող արժեքների գնահատումը:

Հետազոտության առջև դրվել են հետևյալ խնդիրները՝

- Ուսումնասիրվող 6 խոշորացված համայնքներում լուսավորության, աղբահանության և ճանապարհաշինության ոլորտում կատարված ծախսերի կառուցվածքի դինամիկա ըստ 2014-2018թթ
- Վերլուծել աղբահանության, լուսավորության և ճանապարհաշինությանը հատկացված միջոցների տեսակարար կշիռը բյուջետային ծախսերում:
- 1 բնակչին բաժին ընկնող աղբահանության, լուսավորության և ճանապարհաշինության ծախսերի դինամիկան համայնքների միավորման արդյունքում միավորված համայնքների բյուջեի լուսավորության, աղբահանության և ճանապարհաշինության հոդվածների ծախսերն աճել են թե ոչ[1]
- Ինչ կապիտալ ծախսեր են իրականացվել աղբահանության, լուսավորության և ճանապարհաշինության ոլորտներում մինչ խոշորանալը և խոշորանալուց հետո

[1] Տվյալների բացակայության պատճառով հետազոտությունն իրակնացվել է մասամբ: Միայն Ախուրյան և Նոյեմբերյան համայնքներից ստացված տեղեկատվության շնորհիվ է հաջողվել գնահատել բնակավայրերի միջև խոշորացումից հետո ծախսերի բաշխվածությունն ըստ բնակիչների

- Ուսումնասիրվող 6 խոշորացված համայնքներում 1 բնակչին բաժին ընկնող հենասյուների քանակը, աղբամանների քանակը[2]
- Ուսումնասիրվող 6 խոշորացված համայնքներում միջբնակավայրային լուսավորության առկայությունը 2014-2018թթ[3]
- Համայնքների միավորումից հետո աղբահանության, լուսավորության և ճանապարհաշինության ոլորտներում ինչ ծառայություններ են ավելացել ուսումնասիրվող 6 համայնքներում[4]
- Բացահայտել ուսումնասիրվող 6 համայնքներում ճանապարհները ասֆալտբետոնյա են թե գրունտային:[5]

Վերլուծության համար անհրժեշտ տվյալները ձեռքբերելու նպատակով հարցումներ են ուղարկվել նոր ձևավորված համայնքապետարաններ: Բոլոր համայնքապետարաններին ուղարկվել են միևնույն բովանդակությամբ հարցումներ, սակայն ոչ բոլոր համայնքապետարաններից ենք ստացել անհրաժեշտ տվյալները՝ մասնավորապես գնումների պայմանագրեր, կատարված աշխատանքների բնույթ, բյուջեի հաշվետվություն, որտեղ արտացոլված կլինի «Աղբահանություն», «Փողոցների լուսավորում» և «Տրանսպորտ» գործառնական հոդվածների ներքո կատարված տնտեսագիտական ծախսերը:

Ստացված տվյալները համադրվել են Տարածքային կառավարման նախարարության կայքում արտացոլված տվյալների հետ: ՀՀ մարզպետարանների կայքերից ուսումնասիվել են նաև համայնքների տարեկան աշխատանքային պլանները[6]:

Անհամապատասխանություններ են նկատվել համայնքապետարաններից ստացված տվյալների և Տարածքային կառավարման նախարարության կայքում տեղադրված բյուջեներում, այդ դեպքում հիմք են վերցվել նախարարության կայքում արտացոլված տվյալները: Ուսումնասիրության համար դիտարկվել են 2014-2018թթ-ը՝ մինչ խոշորացումը և խոշորացումից հետո առկա իրավիճակը վերլուծելու համար: Թումանյան և Դիլիջան համայնքները խոշորացվել են 2015 թ-ին, Աշոցք և Նոյեմբերյան համայնքները 2016թ-ին, իսկ Ախուրյան և Ստեփանավան համայնքները 2017 թ-ին: Միավորման ազդեցությունը ոլորտային խնդիրների լուծման հարցում գնահատելու համար դիտարկել ենք նաև 2018 թ-ը: 2014-2017թթ համար վերցվել են բյուջեների տարեկան կատարողական ցուցանիշները, իսկ 2018 թ-ի համար վերցվել է պլանային ցուցանիշը՝ իննամսյա ճշգրտումով:

---

[2]Համայնքապետարանից բավարար տեղեկատվություն չենք ստացել, տրամադրվել են հուլիս-օգոստոս ամիսներին առկա ցուցանիշները, որը բավարար չէ համեմատություն անելու և արդյունավետություն գնահատելու տեսանկյունից

[3] Տեղեկատվություն չի տրամադրվել

[4] Տեղեկատվություն չի տրամադրվել

[5] Տեղեկատվություն չի տրամադրվել

[6] Տարեկան աշխատանքային պլաններ սկսել են կազմել 2018 թ-ից:

Ֆինանսական ուսումնասիության արդյունքները համադրվել են նաև սույն ծրագրի շրջանակներում իրականացված սոցհարցումների արդյունքների հետ՝ հասկանալու ծախսեր-բնակչության բավարարվածություն կապը։

1.1 Ախուրյան համայնք

Ախուրյան համայնքի վարչատարածքային սահմանների փոփոխությունը եղել է 2017 թ-ի Նոյեմբերին՝ «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2017 թվականի հունիսի 9-ի ՀՀ ՀՕ – 93 - Ն օրենքով[7]: Նոր կազմավորված համայնքն իր մեջ ներառել է նախկին Այգաբաց, Արևիկ, Բասեն, Կամո, Կառնուտ, Հովիտ, Ջրառատ և Ախուրյան համայնքները: Նոր կազմավորված համայնքի կենտրոնը համարվում է Ախուրյան համայնքը: Նշենք որ համայնքների բյուջեները ըստ մեր դիտարկած ժամանակաշրջանի՝ 2014-2018թթ ունեցել են հետևյալ մեծությունը՝

Գծապատկեր 1. Ախուրյան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքների բյուջեները 2014-2017թթ կատարված և 2018թ պլանավորված ցուցանիշներ[8]/հազ դրամ



Ինչպես տեսնում ենք մինչև խոշորանալը Ախուրյան համայնքի բյուջեն ավելի մեծ է քան մյուս բոլոր յոթ համայնքները միասին՝ համապատասխանաբար 2014-2016թթ՝ 83,8%, 96%, 79%: Հարկ է նշել, որ մինչ խոշորացումը բոլոր համայնքների բյուջեների աճի դինամիկան եղել է դրական, բացառություն է կազմում 2015 թ-ը և 2018թ-ի պլանային ցուցանիշը: Նշենք, որ համաձայն Akhuryan.am կայքում

[7] http://shirak.mtad.am/about-communities/582/

[8] 2018թ-ի համար վերցված են տվյալ տարվա համար պլանավորված ցուցանիշների 2018թ հոկտեմբերի 1-ի դրությամբ ճշտված ցուցանիշները:
Ցուցանիշները վերցված են ՀՀՇՄ պաշտոնական կայք էջում տեղադրված բյուջեներից http://shirak.mtad.am/community-budgetary-expenditure/

տեղադրված 2018թ-ի բյուջեի ծախսային ցուցանիշների մինչ 2018թ-ը աղբահանությունն իրականացրել է համայնքապետարանը, իսկ 2018 թ-ին նախատեսված է «Ախուրյանի Ջանգ» ՓԲԸ միջոցով իրականացնել աշխատանքները: Նաև նշենք, որ 2017թ-ի Ախուրյան խոշորացված համայնքի պլանավորված բյուջեն ևս մեծ է եղել, սակայն կատարվել է 82%-ով: Այստեղից կարող ենք ենթադրել, որ 2018 թ-ի պլանավորումը էապես շեղվում է համայնքում առկա կարիքներ համամար անհրաժեշտ միջոցներից՝ ուռչացված է և պարունակում է ռիսկեր:

Դիտարկենք համայնքներին պետական բյուջեից հատկացված դոտացիաների դինամիկան՝ հասկանալու բյուջեի աճի աղբյուրները:

Գծապատկեր 2. Ախուրյան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներին պետբյուջեից տրամադրվող դոտացիաները 2014-2017թթ կատարված և 2018թ պլանավորված ցուցանիշներ[9]/հազ դրամ



Ինչպես տեսնում ենք 2016-18թթ-ին նախորդ տարիների համեմատ աճել են համայնքներին տրվող դոտացիաները՝ 2014 և 2015թթ-ին այն կազմել է համապատասխանաբար 26 և 28 մլն ՀՀ դրամ, 2016-2018թթ այ կազմել է 29 մլն ՀՀ դրամ: Աճը դինամիկ բնույթ է կրում: Հատկանշական է, որ 2016-18թթ-ին դոտացիայի գումարը չի աճել, որը նշանակում է, որ համայնքների միավորումը պետության կողմից լրացուցիչ ֆինանսավորման հնարավորություն չունի, մինչդեռ միավորման հիմնարումներից մեկը հավելյալ ֆինանսական միջոցներ ներգրավելու հնարարությունն է:Ելնելով հետազոտության խնդիրներից անդրադառնանք

[9] 2018թ-ի համար վերցված են տվյալ տարվա համար պլանավորված ցուցանիշների 2018թ հոկտեմբերի 1-ի դրությամբ ճշտված ցուցանիշները:
Ցուցանիշները վերցված են ՀՀՇՄ պաշտոնական կայք էջում տեղադրված բյուջեներից
http://shirak.mtad.am/community-budgetary-expenditure/

ծախսերին և ավելի մանրամասն դիտարկենք աղբահանության, լուսավորության և ճանապարհաշինության ոլորտներին հատկացված ֆինանսական միջոցների բախվածությունը մինչ խոշորացումը և խոշորացումից հետո:

Նախ նշենք թե յուրաքանչյուր տարի համայնքի բյուջեի քանի տոկոսն է հատկացվել աղբահանության ոլորտում աշխատանքներ իրականացնելու համար:

Աղյուսակ 1. Ախուրյան խոշորացված համայնքի մեջ ներառված նախկին համայնքներում աղբահանության ոլորտի ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուր բյուջեի մեջ 2014-2017թթ կատարված և 2018թ պլանավորված ցուցանիշներ[10].

	Ախուրյան	Ջրառատ	Հովիտ	Կառնուտ	Կամո	Բասեն	Արևիկ	Այգաբաց
2014	3,3%	0,06%			0,05%		0,29%	0,06%
2015	3,5%		0,05%		0,03%		0,3%	
2016	5,6%		0,1%	0,09%	0,06%		0,3%	0,09%
2017	5,4%							
2018	14,5%							

Աղբահանության ոլորտում համայնքային բյուջեից ավելի շատ միջոցներ հատկացվել են Ախուրյան համայնքում, ընդ որում խոշորացումից հետո այս ցուցանիշն աճել է, ինչը նշանակում է, որ նոր միավորված համայնքներում առկա խնդիրներին ևս ուշադրություն է դարձվել, կամ նոր համայնքների բյուջետային միջոցների հաշվին Ախուրյան համայնքում ավելի շատ խնդիրներ են լուծվելու:

Դիտարկենք բոլոր համայնքների բյուջեներից աղբահանության ոլորտում կատարված ծախսերի դինամիկան՝

Գծապատկեր 3. Ախուրյան խոշորացված համայնքում ներառված համայնքների աղբահանության ոլորտում 2014-2017թթ կատարված և 2018թ-ի համար պլանավորված ծախսերի դինամիկան/հազ դրամ.

[10] Դատարկ վանդակները նշանակում են, որ տվյալ ժամանակաշրջանում այդ բնակավայրերում ծախսեր չեն իրականացվել



Ինչպես տեսնում ենք աղբահանության մշտական աշխատանքներ իրականացվել են նախկին Ախուրյան, Արևիկ, և Կամո համայնքում: Այգաբաց, Հովիտ, Ջրառատ և Կառնուտ համայնքներում աղբահանության աշխատանքները դիսկրետ բնույթ են կրել: Բասեն համայնքում աղբահանության ծառայություններ ընդհանրապես չեն մատուցվել:

Ըստ համայնքներից ստացված տեղեկատվության համայնքում կանոնավոր աղբահանություն չի իրականացվում, ըստ անհրաժեշտության գյուղապետարանը մեքենա է տրամադրում և աղբահեռացում է իրականցվում: Բացառություն են կազմում Արևիկ համայնքը՝ որտեղ կա 1 աղբարկղ, և Ախուրյան համայնքը որտեղ 2014 թ-ին եղել է 32 մետաղական աղբամաններ, 2015թ-ից թիվը ավելացել է՝ 50 մետաղական և 30 պլաստիկ շշերի համար նախատեսված աղբամաններով: Ստացվում է, որ աղբահանության իրականացման համար իրականացվում է ծախս՝ մեքենան անհայտ տեղից հավաքում է աղբը և տեղափոխում: Իսկ մինչ մեքենայի մոտենալը բնակավայրում տիրելու է հակասանիտարական պայմաններ:

Ինչպես տեսնում ենք միասնական բյուջեն 2014-2016թթ-ին աստիճանաբար աճել է, 2017 թ-ին արդեն միավորված համայնքների կտրվածքով նվազել է աղբահանության բյուջեն շուրջ 13,8%, իսկ 2018 թ-ի պլանային բյուջեն կրկին բարձր ցուցանիշ է ցույց տալիս: Աղբահանության ոլորտում մատուցվող ծառայությունների համար հավաքագրվում է աղբահանության վճար, որի սահմանաչափը որոշում է տվյալ համայնքի ավագանին[11]: Քննարկվող համայնքներում աղբահանության վճարներ չեն հավաքագրվել մինչև 2017թ-ը՝ խոշորացումը: 2017 թ-ին հավաքագրվել է

[11]«Աղբահանության և սանիտարական մաքրման մասին ՀՀ օրենք» 2011թ հոդված 5,6 https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=69863

5 մլն 924 հազ ՀՀ դրամ եկամուտ, իսկ 2018 թ-ին պլանավորվում է հավաքագրել 10 մլն 624 հազ ՀՀ դրամ:

Նկատենք, որ աղբահանության վճարների հավաքագրումը նպաստել է աղբահանության ոլորտում կատարվող ծախսերի ավելացմանը, ինչը դրական է գնահատվում: Համաձայն Ախուրյան համայնքի 2018թ-ի տարեկան աշխատանքային պլանի (այսուհետ ՏԱՊ) համայնքում Աղբահանության համար ամսական գանձվող վճարը կազմում է 150 դրամ[12]՝ մեկ բնակչի հաշվով, ինչը 50%-ով ավել է մարզկենտրոն Գյումրիում հավաքագրվող գումարից[13]:

Հարկ է նշել, որ բյուջեի ծախսերի ըստ տարիների ցուցանիշը ոչ ամբողջովին է բնութագրում համայնքներում աղբահանության որակը ուստի մր կողմից դիտարկվել է նաև մեկ շնչին բաժին ընկնող աղբահանության ծախսերի ցուցանիշը:: Դիտարկենք մեկ բնակչի հաշվով աղբահանության ծախսը՝ մինչև խոշորանալը և խոշորանալուց հետո ըստ համայնքների՝

Գծապատկեր4. Ախուրյան խոշորացված համայնքում ներառված համայնքներում աղբահանության ոլորտում մեկ բնակչի հաշվով ծախսերի դինամիկան 2014-2017թթ կատարված և 2018թ պլանավորված ցուցանիշներ/հազ դ/



Գծապատկերը ցույց է տալիս, որ մինչև 2016 թ-ը մեկ բնակչի հաշվով կատարվող աղբահանության ծախսը դինամիկ աճել է. բացառություն է Ջրառատը և Բասեն համայնքը, որտեղ ընդհանրապես ծախս չի եղել: 2017 թ-ին մեկ բնակչի հաշվով ծախսն արդեն աճել է 8 համայնքի 18901 բնակիչների հաշվով: Տարբերություն

[12] http://shirak.mtad.am/files/docs/33169.pdf Ախուրյանի 2018թ տարեկան աշխատանքային պլան, էջ 31
[13] http://www.gyumricity.am/Decision2018/Decision.27.02.2018/17.2.pdf Գյումրի համայնքի ավագանու որոշումը 2018թ աղբահանության վճար վճարողների և վճարի չափի մասին, 3-րդ բաժին կետ1

է նկատվում նախկին Ախուրյան համայնքի բնակիչների համար՝2018 թ-ին պլանավորված և իննամսյա կտրվածքով ճշգրտված բյուջեով մեկ բնակչի հաշվով ծախսը 2,6 անգամ բարձր է 2017 թ-ի ծախսից, և 1,4 անգամ 2016 թ-ի ծախսից:

Ինչպես արդեն նշել ենք համայնքապետարաններից ստացված և Տարածքային կառավարման նախարարության կայքում զետեղվա՛ ֆինանսական ցուցանիշների մեջ առկա է տարբերություններ, այդ պատճառով հետազոտության համար հիմք չենք վերցրել համայնքապետարանից ստացված տվյալները: Բայց այստեղ ներկայացված է 2017 թ-ին կատարված ոլորտային ծախսերն ըստ նախկին համայնքների, որը անտեսել չենք կարող: Տոկոսային հարաբերակցությամբ դիտարկելիս նկատում ենք, որ ծախսերի 63,4%-ը կատարվել է Ախուրյան համայնքում, 7,9% Արևիկում, 2,2% Այգաբացում, 19,1% Կառնուտում, 2,8% Հովիտում, 4,6% Կամոյում: Բնակչության բաշխվածությունն ըստ համայնքների հետևյալն է՝ Ախուրյան 53%, Արևիկ 9,8%, Այգաբաց 4,5%, Կառնուտ՝ 6,5%, Հովիտ՝ 2,8%, Բասեն՝ 9,3%, Ջրառատ՝ 6,4%, Կամո 7,7%: Աղբահանության ծախսերը բնակչության թվին համապատասխն բաշխվածություն ունեցել է միայն Հովիտ համայնքում: Մյուս համայնքներում տարբեր է՝ Ախուրյանում և Կառնուտում ծախսերի տեսակարար կշիռն ավելի մեծ է եղել քան բնակչության տեսակարար կշիռն է:

Ուշագրավ է, որ ՏԱՊ-ով Ախուրյան բնակավայրում նախատեսված է աղբահանության իրականացում յուրաքանչյուր աշխատանքային օր, իսկ բնակավայրերում ամիսը մեկ անգամ[14]: Ակնհայտ է, որ բնակավայրերում հավասարաչափ ծավալների աշխատանքներ չեն իրականացվում: , : Աղբահանության համար ծախսվող բյուջետային միջոցների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ խոշորացման արդյունքում նոր ձևավորված Ախուրյան համայնքում ստեղծվել է հնարավորություն նախին Ախուրյան համայնքից բացի մյուս բոլոր բնակավայրերում նախկինից որակյալ աղբահանության ծառայություններ մատուցել, սակայն համայնքային իշխանությունները չեն շտապում հնարավորությունն օգտագործել ի նպաստ բոլոր բնակավայրերի:

Անդրադառնալով լուսավորության ոլորտում մատուցվող ծառայություններին նկատում ենք, որ այստեղ ևս ծախսերը 2014-18թթ աճել են՝ բացառությամբ 2015 թ.

Գծապատկեր 5. Ախուրյան խոշորացված համայնքում ներառված համայնքների լուսավորության ոլորտի ծախսերը 2014-2017թթ կատարված և 2018թ պլանավորված ցուցանիշներ/հազ դ .

[14] http://shirak.mtad.am/files/docs/33169.pdf Ախուրյան ՏԱՊ 2018, էջ 30



2015թ-ի նվազումը Ախուրյան, Ջրառատ, Հովիտ, Կառնուտ և Կամո համայնքներում պայմանավորված է ընդհանուր բյուջեի նվազումով՝ քանի որ լուսավորության ոլորտին հատկացվող ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ չի փոխվել՝ անգամ ավելացել է (տես Աղյուսակ 2):

Աղյուսակ 2 Ախուրյան խոշորացված համայնքի մեջ ներառված նախկին համայնքներում լուսավորության ոլորտի ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուր բյուջեի մեջ՝ 2014-2017թթ կատարված և 2018թ պլանավորված ցուցանիշներ/%/.

	Ախուրյան	Ջրառատ	Հովիտ	Կառնուտ	Կամո	Բասեն	Արևիկ	Այգաբաց
2014	1.5%	0.3%		1.9%	1.9%	3.9%	2.5%	
2015	1.4%	0.6%		2.7%	3%	1.2%	1.3%	
2016	3%	0.7%	3.4%	1.8%	3.5%	2.3%	2.3%	
2017	4%							
2018	3.3%							

Աղյուսակից հստակ երևում է որ եղել են համայնքներ որ այս գործառույթի համար միջոցներ չեն նախատեսել, ակմ ծախսերը ընդհանուր բյուջեիկառուցվածքում չեն գերազնցել մեկ տոկոսը, օրինակ Ջրառատ համայնքում, ասյու հանդերձ բյուջեների համայնքների միավորումից հետո 2017 թ. աճել է նաև լուսավորության համամր նախատեսվող միջոցների տեսակարար կշիռը ընդհանուր բյուջեում: Ելնելով համայնքապետարանից ստացված տվյալներից նշենք, որ 2017 թ-ին լուսավորության ոլորտին հատկացված միջոցները բաշխվել են հետևյալ համամասնությամբ՝ Ախուրյան 66%, Արևիկ 15%, Այգաբաց 5%, Կառնուտ՝ 3%, Կամո 5%, Բասեն 2%, Ջրառատ՝ 4%: Բնակչության բաշխվածությունն ըստ համայնքների հետևյալն է՝ Ախուրյան 53%, Արևիկ 9,8%, Այգաբաց 4,5%, Կառնուտ՝ 6,5%, Հովիտ՝

2,8%, Բասեն՝ 9,3%, Ջրառատ՝ 6,4%, Կամո 7,7%: Ախուրյանում և Արևիկում տեսակարար կշռով ավելի շատ ֆինանսական միջոցներ են հատկացվել, քան բնակչության տեսակարար կշիռն է ընդհանուր համայնքում: Այգաբացում համամասնությունը գրեթե պահպանվել է: Դրական է, որ խոշորացումից հետո Այգաբացում լուսավորության աշխատանքներ են իրականացվել:

Հետազոտության մեջ դիտարկվել է համայնքներում մեկ բնակչի հաշվով կատարված ծախսերը,(տե՛ս գծ.6)

Գծապատկեր 6. Ախուրյան խոշորացված համայնքում ներառված համայնքներում լուսավորության ոլորտում 2014-2017թթ կատարված և 2018թ պլանավորված ծախսերը մեկ բնակչի հաշվով 2014-2018թթ/ հազ դ



Ինչպես տեսնում ենք խոշորացումից հետ մեկ բնակչի հաշվով կատարված ծախսերը մեծացել են՝ ի համեմատ նախկինում համայնքներում մեկ բնակչի հաշվով կատարվող ծախսերի: Այս ցուցանիշի մեծությունը պայմանավորված է ընդհանուր բյուջեի մեծացմամբ: Հատկանշական է, որ մեկ բնակչի հաշվով 2014-15թթ Կառնուտ համայնքն ունեցել է ամենաբարձր ցուցանիշը: Ֆինասական վերլուծությունից զատ անհրաժեշտություն է առաջանում ուսումնասիրել միավորումից հետո ամեն համայնքին հատկացվող ծախս/բնակիչ ցուցանիշը:

Դիտարկենք մեկ հենասյան գծով ծախսը ևս տարբեր համայնքներում ըստ տարիների

Գծապատկեր 7. Ախուրյան խոշորացված համայնքում ներառված համայնքներում լուսավորության ոլորտում2014-2017թթ կատարված և 2018թ պլանավորված ծախսերը մեկ հենասյան հաշվով 2014-2018թթ/ հազ դ



Մեկ հենասյան գծով ծախսը ևս աճել է խոշորացվելուց հետո: Աղյուսակ 3-ից պարզ է դառնում, որ այս աճը պայմանավորված է լուսավորության ցանցի ընդլայնումով՝.2017 թ-ին ճանապարհային լուսավորությանը հատկացված միջոցների 20%-ն է եղել կապիտալ ծախս, իսկ 2018 թ-ին կապիտալ ծախսեր չեն նախատեսվել: Սա խոսում է փողոցներում լուսակետերի ավելացման մասին՝ ի հաշիվ 2017 թ-ին կառուցված և 2018 թ-ին վերանորոգվող հենասյուների:

Համաձայն Ախուրյան ՏԱՊ 2018-ի նախատեսված է Ախուրյան, Արևիկ, Այգաբաց, Կառնուտ, Հովիտ, Բասեն, Ջրառատ և Կամո բնակավայրերում լուսավորության ցանցի կառուցում: Նախատեսված է նաև 40 նոր սյուների և լուսատուների տեղադրում[15], իսկ բյուջեի լուսավորության ոլորտի ֆոնդային մասով ծախսեր նախատեսված չեն: Այս դեպքում նոր լուսակետերի ավելացումը ենթադրում է հին սյուների վրա նոր լուսատուների տեղադրում:

Աղյուսակ 3. Ախուրյան խոշորացված համայնքում ներառված համայնքներում լուսավորության ոլորտում կատարված ծախսերը ըստ բյուջեի ֆոնդային և վարչական մասերի 2014-2017թթ կատարված և 2018թ պլանավորված ցուցանիշներ/ % մասերի.

		Ախուրյան	Ջրառատ	Հովիտ	Կառնուտ	Կամո	Բասեն	Արևիկ	Այգաբաց
2014	Վարչ. %	100	100		100	100	100	100	
	Ֆոնդ. %	0	0		0	0	0	0	
	Ընդ/հագ դ	*2999,2*	*91,1*		*488,1*	*599*	*803*	992,1	
2015	Վարչ. %	100	100		100	100	100	100	
	Ֆոնդ. %	0	0		0	0	0	0	
	Ընդ/հագ դ	*2681,9*	*165*		*763,3*	*743*	*397,7*	*528,1*	

[15] http://shirak.mtad.am/files/docs/33169.pdf Ախուրյանի ՏԱՊ 2018, էջ21

2016	Վարչ. %	100	100	100	100	100	43	100	
	Ֆոնդ. %	0	0	0	0	0	57	0	
	Ընդ/հազ դ	*7777,1*	*249,5*	*400*	*484,1*	*919,8*	*830,1*	*859,3*	
2017	Վարչ. %	74,2							
	Ֆոնդ. %	25,8							
	Ընդ/հազ դ	*19395.1*							
2018	Վարչ. %	100							
	Ֆոնդ. %	0							
	Ընդ/հազ դ	*18500*							

Աղյուսակից երևում է, որ ֆոնդային բյուջեով ծախսեր արվել են 2017թ-ին՝ խոշորացվելու ժամանակ: Կարելի է ենթադրել, որ համայքների միավորման այս փուլում էապես փոխվել է կապիտալ ծախսերը, հատկապես միավորման փուլում, որն էլ խոսում է այն մասին որ ֆինանսական միջոցներն ուղղվել են կապիտալ արժեքների ստեղծմանը:

Ընդհանրացնելով նկատում ենք, որ ավելացել են և մեկ բնակչի հաշվով ծախսը և մեկ հենասյան մասով ծախսը, լուսավորության ոլորտում դրական փոփոխությունների նշան է:

Ուսումնասիրվող ոլորտներից է նաև ճանապարհաշինության ոլորտը: Այս ոլորտին հատկացված ծախսերի դինամիկան ներկայացված է գծապատկեր 8-ում

Գծապատկեր 8. Ախուրյան խոշորացված համայնքում ներառված համայնքներում ճանապարհաշինության ոլորտում 2014-2017թթ կատարված և 2018թ պլանավորված ծախսերը 2014-2018թթ /հազ դ



Ամենամյա ճանապարհաշինական աշխատանքներ իրականացվել են Ախուրյան, Ջրառատ, Կառնուտ, Բասեն, 2015-16թթ Կամո , իսկ 2016թ-ին նաև Հովիտ

համայնքներում: Նշենք, որ Հովիտում իրականացվել են կապիտալ բնույթի ծախսեր, Բասենում և Ջրառատում 2015-2016թթ-ին միայն վարչական բնույթի ծախսեր են իրականացվել: Կառնուտում, Կամոյում իրականացվել են կապիտալ բնույթի ծախսեր, իսկ նախկին Ախուրյան համայնքում իրականացված ճանապարհաշինական աշխատանքների մեծ մասը եղել են կապիտալ բնույթի: Խոշորացումից հետո նկատում ենք, որ ոլորտային ծախսերը մեծացել են:

Աղյուսակ 4 Ախուրյան խոշորացված համայնքում ներառված համայնքներում ճանապարհաշինության ոլորտում կատարված ծախսերը ըստ ֆոնդային և վարչական մասերի 2014-2017թթ կատարված և 2018թ պլանավորված ցուցանիշներ.

		Ախուրյան	Ջրառատ	Հովիտ	Կառնուտ	Կամո	Բասեն	Արևիկ	Այգաբաց
2014	Վարչ. %		100		78		100		
	Ֆոնդ. %	100			22				
	Ընդ/հազ դ	*29295*	*714*		*3173,5*		*216,4*		
2015	Վարչ. %	1,4	100		50	7,7	100		
	Ֆոնդ. %	98,6			50	92,3			
	Ընդ/հազ դ	*31503,4*	*742,5*		*1990,4*	*1091,1*	*389*		
2016	Վարչ. %	8,2	100		48,8	23	100		
	Ֆոնդ. %	91,8		100	51,2	77			
	Ընդ/հազ դ	*30142,6*	*1120*	*850*	*6261,3*	*1274,4*	*1285,3*		
2017	Վարչ. %	34,5							
	Ֆոնդ. %	65,5							
	Ընդ/հազ դ	*44954,7*							
2018	Վարչ. %	24							
	Ֆոնդ. %	76							
	Ընդ/հազ դ	*46000*							

Ախուրյան համայնքում դինամիկայում աճել է ընթացիկ բնույթի ծախսերին հատկացվող գումարները, իսկ ֆոնդայինը նվազել է: Կառնուտ և Կամո համայնքներում դիտարկվում է հակառակ միտումը, իսկ մյուս համայնքներում իրավիճակ չի փոխվել:

Համայնքների միավորման ազդեցությունն առավել պատկերավոր հասկանալու համար դիտարկենք մեկ բնակչի հաշվով ճանապարհաշինական ծախսերը դինամիկայում ինչպիսի փոփոխության են ենթարկել:

Գծապատկեր 9. Ախուրյան խոշորացված համայնքում ներառված համայնքներում ճանապարհաշինության ոլորտում կատարված ծախսերը մեկ բնակչի հաշվով 2014-2017թթ կատարված և 2018թ պլանավորված ցուցանիշներ/հազ դ.



Գծապատկերից արդեն իսկ երևում է, որ մեկ բնակչի հաշվով ճանապարհաշինական ծախսը նվազել է չնայած որ ընդհանուր ճանապարհաշինական ոլորտի ծախսերը ավելացել էր: Սա խոսում է մեկ համայնքի ֆինանսական միջոցների տեղաբաշխման մասին: Համաձայն Ախուրյանի ՏԱՊ 2018-ի փոսալցման և սպասարկման աշխատանքներ են իրականացվելու Ախուրյան համայնքի բոլոր բնակավայրերում:Համաձայն համայնքապետարանից ստացված տվյալների 2017թ-ին ոլորտային ծախսն ըստ բնակավայրերի ունեցել է հետևյալ բաշխվածությունը՝ Ախուրյան 75,2%, Արևիկ՝ 2,3%, Կառնուտ՝ 15,8%, Ջրառատ՝ 5,3%, Կամո՝ 1,4%: Բնակչության բաշխվածությունն ըստ համայնքների հետևյալն է՝ Ախուրյան 53%, Արևիկ 9,8%, Այգաբաց 4,5%, Կառնուտ՝ 6,5%, Հովիտ՝ 2,8%, Բասեն՝ 9,3%, Ջրառատ՝ 6,4%, Կամո 7,7%: Այս ոլորտում ևս համաչափություն չի նկատվում: Ախուրյան համայնքում ոլորտային ծախսերի տեսակարար կշիռն ավելի մեծ է եղել քան բնակչության տեսակարար կշիռն է:

Հատկանշական է որ միավորված համայնքում մեկ բանկչին ընկնող ճանապարհաշինարարական ծախսը ավելի քիչ է քան մինչև միավորումը Կառնուտ համայնքում, որը փաստում է այն մասին, որ միավորումը նվազեցնում է մեկ կամ մի քանի համայնքներում մատուցված ծառայություններիորակը կամ քանակը՝ հանուն մյուս համայնքների:

1.2 Աշոցք համայնք

Աշոցք համայնքը կազմավորվել է 2016 թվականի հոկտեմբերին «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2016 թվականի հունիսի 17-ի ՀՀ ՀՕ – 100 - Ն օրենքով[16]: Աշոցք համայնքն իր մեջ ներառում է նախկին Աշոցք, Կարմրավան, Կրասար, Մեծ Սեպասար, Փոքր Սեպասար, Ղազանչի, Սիզավետ, Թավշուտ, Բավրա, Սարագյուղ, Զույգաղբյուր համայնքները: Նոր կազմավորված համայնքի մեջ մտնող նախկին համայնքները ըստ տարբեր տարիների ունեցել են հետևյալ բյուջեները.

Գծապատկեր 10. Աշոցք խոշորացված համայնքի մեջ մտնող համայնքների 2014-2017թթ կատարված և 2018թ պլանավորված բյուջեները/հազ դ



2014-2018թթ դինամիկայում ընդհանուր համայնքային բյուջեն աճել է, աճել են նաև նախկին համայնքների բյուջեները: Աճի պատճառները հասկանալու համար նախ դիտարկենք պետբյուջեից տրամադրվող դոտացիաների շարժը ըստ համայնքների՝

Գծապատկեր 11. Աշոցք խոշորացված համայնքի մեջ մտնող համայնքներին 2014-2017թթ կատարված և 2018թ պլանավորված դոտացիաների փոփոխությունը. / հազ դ

[16] ՀՀ Շիրակի մարզպետարան http://shirak.mtad.am/about-communities/590/



Գծապատկերից երևում է որ դոտացիաների հատկացման չափը դինամիկ աճել է մինչ 2016թ-ը, ինչով էլ հենց պայմանավորված է նույն ժամանակաշրջանում ընդհանուր բյուջեի աճը: 2016 թ-ի նոյեմբեր դոտացիաների հաշվարկում մեթոդաբանության փոփոխություն է եղել, որով էլ կարելի է պայմանավորել հաջորդիվ դինամիկայի փոփոխությունը: Այստեղից կարող ենք եզրակացնել, որ 2017 և 2018 թթ աճել են սեփական եկամուտները՝ համայնքների միավորումը նպաստել է եկամուտների հավքագրելիությանը:

Անդրադառնալով ոլորտային ծախսերին դիտարկենք դրանց տեսակարար կշիռն ընդհանուր բյուջեում

Գծապատկեր 12. Աշոցք խոշորացված համայնքի մեջ մտնող նախկին համայնքների կողմից աղբահանության ոլորտում 2014-2017թթ կատարված և 2018թ պլանավորված ծախսերի դինամիկան/հազ դ.



Ինչպես տեսնում ենք աղբահանության ոլորտում աշխատանքներ իրականացվել են միայն Մեծ Սեպասար և Աշոցք համայնքներում: Գծապատկերն արտացոլում է, որ 2017 թ-ից կտրուկ աճել են աղբահանությանը հատկացվող ծախսերը: Համայնքային բյուջեից ըստ 2014-2018թթ Աշոցքի աղբահանության ոլորտում աշխատանքներ իրականացնելու համար հատկացվել են համապատասխնաբար 3,97%, 3%, 1,6%, 2,9% և 2,8%: Իսկ Մեծ Սեպասարում 2014 թ-ին՝2,3% և 2015թ-ին՝ 3,4%: Ինչպես տեսնում ենք ոլորտի ծախսերը բացարձակ արժեքով աճել են դինամիկայում, սակայն ընդհանուր բյուջեում տեսակարար կշիռը նվազել է: Սա նշանակում է, որ միավորվելուց հետո հնարավորություն է ստեղծվել ավելի շատ աշխատանքներ իրականացնել ոլորտում, սակայն ոլորտային խնդրի կարևորության աստիճանը նոր ձևավորված համայնքում նվազել է:

2014-2017թթ կատարված բոլոր ծախսերը եղել են վարչական բյուջեից՝ ընթացիկ բնույթի ծախսեր: Միայն 2018 թ-ի պլանավորված 6 մլն-ից 4մլն-ը՝ 66,6%-ն է նախատեսված կապիտալ ծախսերի իրականացման համար: Ուշագրավն այն է, որ կապիտալ պլանավորված ծախսից բխող գործողություններ ներառված չեն Աշոցքի 2018թ ՏԱՊ-ում: Այստեղ աղբահանության ոլորտին վերաբերող ծրագրեր ընդհանրապես ներկայացված չեն: Սա նշանակում է որ այս ոլորտը համայնքում անտեսված է: Կարելի է ենթադրել, որ նախատեսված միջոցներով իրականացվում են առաջնային անհրաժեշտ աշխատանքները՝ համայնքը աղբադաշտի վերածվելուց փրկելու համար: Սրան զուգահեռ բնակչությունից հավաքագրվում է աղբահանության վճարներ, և 2018թ-ն առանձնանում է հավաքագրելիության բարձր մակարդակով՝ նախորդ տարիների համեմատ: 2018 թ-ին հավաքագրվել է 1,5 մլն ՀՀ դրամ, 2017 թ-ին՝ 67 հազ դրամ, իսկ նախորդող տարիներին հավաքագրում չի եղել:

Մեկ բնակչի հաշվով կատարված ծախսերի դինամիկան դիտարկելիս նկատում ենք, որ մեկ բնակչի հաշվով կատարված ծախսերը նվազել են՝ չնայած ոլորտային ծախսերի բացարձակ թվի աճին: Սա պայմանավորված է նրանով որ խոշորացված համայնքի կազմում գտնվող համայնքների մեծ մասում նախկինում աղբահանույն ընդհանրապես չի եղել: Այստեղ ևս պետք է նշել որ հատկացվող միջոցների աճը դեռևս չի խոսում ոլորտի բարելավման մասին:

Գծապատկեր 13. Մեկ բնակչի հաշվով կատարված ծախսերի դինամիկան Աշոցք խոշորացված համայնքում և նրա մեջ մտնող նախկին համայնքներում՝ 2014-2017թթ հավաքագրված և 2018թ պլանավորված ցուցանիշներ/հազ դ.



Ամփոփելով նշենք, որ համայնքում աղբահանության ոլորտում աշխատանքներ իրականացվում են առանց նախնական վերլուծությունների ու պլանավորումների: Ֆինանսական միջոցների պլանավորման և օգտագործման այս եղանակը չի կարող ոլորտում ապահովել ցանկալի արդյունք, քանի որ ըստ հրատապության բնույթի աշխատանքների իրականացման ժամանակ ոլորտի հիմնական խնդիրները դուրս են մնում:

Դիտարկենք լուսավորության ոլորտում կատարված ծախսերը՝ մինչ խոշորանալն ու խոշորանալուց հետո:

Գծապատկեր 14. Աշոցք խոշորացված և նրա կազմում ընդգրկված նախկին համայնքներում լուսավորության ոլորտում 2014-2017թթ կատարված և 2018թ պլանավորված ծախսերի դինամիկան/հազ դ.



Դինամիկայի մեջ հսկայական փոփոխություն է նկատվում 2017 և 2018թթ՝ համայնքների միավորվելուց հետո: Նշենք, որ 2017թ-ին իրականացված և 2018-ին պլանավորված ծախսերը եղել են վարչական բնույթի[17]: Ընդհանուր բյուջեի մեջ ոլոտային ծախսերն ունեցել են հետևյալ տեսակարար կշիռները՝ Աշոցք՝ 0,2%, 0,9%, 0,5%, 6,9% և 3,9%, Սիզավետում՝ 2014 թ-ին 4,6%, Թավշուտում 1,3%, Սարագյուղում՝ 1% և 0,2%, Զույգաղբյուրում 2,2% և 2,8%: Ինչպես տեսնում ենք միավորումից հետո ոլորտային ծախսերը ոչ միայն բացարձակ թվով են աճել, այլ նաև դրանց տեսակարար կշիռն է աճել ընդհանուր բյուջեում՝ բացառությամբ 2018 թ-ի:

Աճը հասկանալու համար հարցում է իրականացվել, որին պատասխան չենք ստացել: Համաձայն Աշոցք համայնքի կայքում տեղադրված տեղեկատվության ծախսերը եղել են հատուկ նպատակային այլ նյութերի ձեռքբերման ուղղությամբ: Ստացվում է, որ Էներգետիկ ծառայություններ ձեռք չի բերվել: Այստեղ հարց է առաջանում թե այդ դեպքում ինչպես են լուսավորել համայնքի 313 հենասյուները[18], և ինչ են ձեռք բերվել 2017թ-ին: Նույն ծախսն իրականացվել է 2018 թ-ին: Ենթադրվում է, որ սա մասնագիտական թերացման խնդիր է իսկ 2018 թ-ի ոլորտային ծախսերի նվազումը պայմանավորված է եղել նրանով, որ 2017թ-ին համայնքում լուսատուներ են ավելացել, իսկ 2018 թ-ին նման ծախս չի նախատեսվել:

Գծապատկեր 15. Աշոցք խոշորացված և նրա կազմում ընդգրկված նախկին համայնքներում լուսավորության ոլորտում 2014-2017թթ կատարված և 2018թ պլանավորված ծախսերի դինամիկան մեկ բնակչի հաշվով/հազ դ.

[17] http://shirak.mtad.am/community-budgetary-expenditure/
[18] Տվյալը հարցման արդյունքում ստացել ենք Աշոցքի համայնքապետարանից



Մեկ բնակչի հաշվով կատարված ծախսերի դինամիկան մի փոքր այլ է: 2014թ-ին ամենաբարձր ցուցանիշը եղել է Սիզավետում, 2015թ-ին Զույգաղբյուրում, 2016 թ-ին ցուցանիշը կտրուկ նվազել է՝ պայմանավորված այն հանգամանքով, որ խոշորացումը եղել է հոկտեմբեր ամսին՝ տարին ամփոփվել է խոշորացված համայնքի բնակչության թվով և տարեսկզբին պլանավորված բյուջեով: 2017 թ-ին արդեն մեծացել է ցուցանիշը՝ 2016 թ-ի հետ համեմատած 14 անգամ, իսկ 2018 թ-ին կրկին նվազել՝ 0,6 անգամ սակայն բարձր մնալով մինչ խոշորացումը եղած ցուցանիշից: Այս դեպքում անհրաժեշտ է դիտարկել տարեկան աշխատանքային պլանը: Ի տարբերություն աղբահանության ոլորտի լուսավորության ոլորտի համար 2018 թ-ում պլանավորված է լուսավորության ցանցի անցկացում նախկին Թավշուտ, Սիզավետ և Մեծ Սեպասար համայնքներում: Նախատեսված է՝

- ✓ Փողոցներ արտաքին լուսավորության համակարգի երկարությունը, 2 կմ
- ✓ Գիշերային լուսավորության հենասյուների թիվը 109
- ✓ Գիշերային լուսավորված փողոցների տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ 35%
- ✓ Գիշերային լուսավորվածության ժամերի թիվը օրվա կտրվածքով՝ ամռանը 4 ժ, ձմռանը՝ 3ժ
- ✓ Բնակիչների բավարարվածությունը համայնքում գիշերային լուսավորվածությունից 32%

Ինչպես տեսնում ենք լուսավորության համակարգի անցկացման և պահպանման համար պլանավորված են մի քանի գործողություններ, որոնք ունենալու են առանձին ծախսեր, սակայն բյուջեում նշված է միայն հատուկ նպատակային նյութերի ձեռք բերում: Հասկանալի է, որ ամբողջ աշխատանքների իրականացումը հնարավոր չէ

անել այդ հոդվածով: Այստեղ ևս խնդիրը գնահատում ենք որպես մասնագիտական թերացում, որը չի նկատվել նաև Շիրակի մարզպետարանի կողմից:

Դիտարկենք նաև ճանապարհաշինության ոլորտում կատարվող ծախսերը.

Գծապատկեր 16. Աշոցք խոշորացված և նրա վարչական կազմում մտնող նախկին համայնքներում ճանապարհաշինության աշխատանքների համար 2014-2017թթ կատարված և 2018թ պլանավորված ծախսերը/հազ դ.



Ճանապարհաշինության ծախսերը ևս էական աճ են գրանցել խոշորացումից հետո՝ 2017թ-ին 667%, 2018թ-ին՝ 21% նվազել է, սակայն 2014-2016թթ համեմատ բարձր ցուցանիշը պահպանվել է: Համայնքային բյուջեներում ոլորտային ծախսերն ունեցել են հետևյալ տեսակարար կշիռները՝

Աղյուսակ 5 Աշոցք խոշորացված և նրա վարչական կազմում մտնող նախկին համայնքներում ճանապարհաշինության աշխատանքների համար 2014-2017թթ կատարված և 2018թ պլանավորված ծախսերի տեսակարար կշիռները համայնքային բյուջեում.

	Աշոցք	Կրասար	Մեծ Սեպասար	Ղազանչի	Սիզավետ	Թավշուտ	Սարագյուղ	Զույգաղբյուր
2014	0,9%			2,3%	0,9%	1,2%	1,3%	
2015	0,3%	3,7%	8%	2%	7,7%			3,7%
2016	1%							
2017	7,5%							
2018	5,3%							

Ինչպես տեսնում ենք Աշոցք համայնքում խոշորացումից ոլորտին հատկացվող ծախսերի տեսակարար կշիռը աճել է՝ բացառությամբ 2018 թ-ի: Սակայն Մեծ Սեպասար և Սիզավետ համայնքների հետ համեմատած ցուցանիշը նվազել է:

Համայնքների միավորումից հետո ոլորտային ծախսերի բացարձակ ցուցանիշները դրական աճ են գրանցել, ընդհանուր առմամբ աճել է նաև համայնքային բյուջեում ոլորտի ունեցած տեսակարար կշիռը: Սակայն աճը բոլոր բնակավայրերի համար միանշանակ չէ: Աշոցքի 2018թ ՏԱՊ-ում նշված են նախկին Կարմրավան, Մեծ Սեպասար, Փոքր Սեպասար բնակավայրերի միջբնակավայրային ճանապարհների վերանորոգումներ: Դիտարկենք ոլորտի կապիտալ/ֆոնդային բյուջե/ և ընթացիկ/վարչական բյուջե/ ծախսերի համամասնությունը և դինամիկան:

Աղյուսակ 6. Աշոցք խոշորացված և նրա վարչական կազմում մտնող նախկին համայնքներում ճանապարհաշինության աշխատանքների համար 2014-2017թթ կատարված և 2018թ պլանավորված ծախսերը ըստ բյուջեի վարչական և ֆոնդային մասերի

		Աշոցք	Կարմրավան	Կրասար	Մեծ Սեպասար	Փոքր Սեպասար	Ղազանչի	Սիզավետ	Թավշուտ	Բավրա	Սարագյուղ	Զույգաղբյուր
2014	Վարչ. %	100		100			100	100	100		100	
	Ֆոնդ. %	0		0			0	0	0		0	
	Ընդ/հազդ	*600*		*300*			*200*	59,1	100		560,2	
2015	Վարչ. %	100			0		100	100			100	0
	Ֆոնդ. %	0			100		0	0			0	100
	Ընդ/հազդ	*200*			*1480*		*300*	*704,4*			*466,7*	*300*
2016	Վարչ. %	100										
	Ֆոնդ. %	0										
	Ընդ/հազդ	*1894*										
2017	Վարչ. %	24,7										
	Ֆոնդ. %	75,3										
	Ընդ/հազդ	*14575*										
2018	Վարչ. %	76										
	Ֆոնդ. %	24										
	Ընդ/հազդ	*11496*										

Աղյուսակից երևում է, որ մինչ խոշորանալը համայնքներում ճանապարհաշինարարական աշխատանքների համար հատկացված միջոցները

հիմնականում վարչական բնույթի ծախսեր են եղել: Բացառություն է կազմում 2017 թ-ը, երբ ոլորտային ծախսերի 75,3%-ը հատկացվել է կապիտալ ճանապարհաշինարարության համար: Դիտարկելով Աշոցք համայնքի պաշտոնական կայքում արտացոլված 2017 թ-ի տվյալները[19] տեսնում ենք, որ ֆոնդային բյուջեն նախատեսված է եղել «Տրանսպորտային սարքավորումներ» հոդվածով: Հետաքրքիր է, որ 2018 թ-ի համար ճանապարհաշինություն հոդվածի ֆոնդային մասով նախատեսված ծախսը ևս սարքավորումների ձեռքբերման նպատակով է եղել: Սա նշանակում է որ չնայած արված կապիտալ ծախսերին համայնքում փողոցների կապիտալ նորոգում չի եղել: Ձեռք բերված մեքենաներով արվում են ժամանակավոր հարթեցումներ:

Խոշորացումից հետո մեկ բնակչի հաշվով ճանապարհաշինարարական ծախսերը աճել են՝

Գծապատկեր 17. Մեկ բնակչի հաշվով ճանապարհաշինական աշխատանքների ծախսը՝ Աշոցք խոշորացված և վերջինիս վարչական տարածնքերի մեջ մտնող նախկին համայնքներում 2014-2017թթ կատարված և 2018թ պլանավորված ցուցանիշներով/հազ դ.



Միավորումից հետո մեկ բնակչի հաշվով ծախսերի նվազում նկատվում է Սարագյուղ համայնքում, և Զույգաղբյուրում՝ 2015թ-ի համեմատ: Չնայած բյուջեի մեծացմանը, ոլորտային ծախսերի ավելացմանն ու ֆոնդային բնույթի ծախսերի իրականացմանը այս ոլորտում ևս չի նկատվում աշխատանքների որակի բարելավում:

[19] http://ashotsq.am/Pages/NewBudget/Out/result.aspx

Գլուխ 2 Տավուշի մարզում խոշորացված Ախուրյան և Աշոցք համայնքներում 2014-2018 թթ ֆինանսական վերլուծություն՝ աղբահանության, լուսավորության և ճանապարհաշինության ոլորտներում

2.1 Դիլիջան համայնք

Դիլիջան համայնքը վերաձևավորվել է 2015 թ-ի դեկտեմբերի 15-ին՝ «ՀՀ վարչատարածքային բաժանումների մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների պահանջով: Նոր խոշորացված համայնքում ընդգրկվել են նախկին Դիլիջան, Հաղարծին, Թեղուտ, Գոշ, Հովք, Աղավնավանք և Խաչարձան համայնքները: Նոր խոշորացված համայնքն ունի 18,667 մարդ:

Դիտարկենք Դիլիջան խոշորացված համայնքի բյուջեն՝ մինչ խոշորանալը ըստ առանձին համայնքների ու խոշորանալուց հետո՝

Գծապատկեր 18. Դիլիջան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքների բյուջեների 2014-2017թթ-ի կատարված և 2018 թ-ի պլանային ցուցանիշներ/հազ դ.



Ինչպես դիտարկված մյուս համայնքներում Դիլիջանում ևս համայնքների միավորումից հետո նկատվում է միասնական բյուջեի աճ: Աճը կտրուկ նկատվում է 2018թ-ին. 2014-2018թթ դինամիկայում համապատասխնաբար՝ 7,7%, 8,6%, 5% և 37%: Աճի պատճառները հասկանալու համար դիտարենք պետական դոտացիաների չափերն ըստ տարիների՝

Գծապատկեր 19. Դիլիջան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներին 2014-2017թթ տրամադրված և 2018թ պլանավորված դոտացիաները /հազ դ



Ինչպես տեսնում ենք պետբյուջեից տրամադրվող դոտացիաները դինամիկ աճել են՝ բացառությամբ 2018թ-ի: 2014-2018 թթ դինամիկայում՝ 12%, 5,7%, 4% և 2018թ-ին նվազել է 1,4%-ով: Ինչպես տեսնում ենք 2015-2016 թթ բյուջեի աճը մեծամասամբ պայմանավորված է դոտացիաների աճով: Հարկ է նշել, որ Դիլիջան համայնքում պետբյուջեից բացի ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներից դիտարկված ժամանակահատվածում տրամադրվել են նաև սուբվենցիաներ և այլ դոտացիաներ: 2014-2017թթ Դիլիջան համայնքին տրված սուբվենցիաներն ունեցել են հետևյալ դինամիկան՝ 5մլն, 4մլն, 14 մլն, 12 մլն և 10,5 մլն: 2014 թ-ին Դիլիջան համայնքից բացի սուբվենցիաներ ստացել են նաև Հաղարծինը՝ 6,7 մլն, Թեղուտը՝ 28 մլն, Աղավնավանքը՝ 4,8 հազ, Հովքը՝ 4,8 հազ դրամ» Իսկ 2015թ-ին Հաղարծինը՝ 8,8 մլն, Խաչարձան՝ 9 մլն, Աղավնավանքը՝ 5 մլն, Հովքը՝ 1,5 մլն, Գոշ՝ 16 մլն դրամ:

դ

2015թ և 2016թ-ին համայնքները ստացել են նաև այլ դոտացիաներ: դոտացիաներ: 2015 թ-ին՝ Դիլիջանում 33 մլն, Հաղարծինում 2,8 մլն, Աղավնավանքում 298 հազ, Գոշում 387 հազ ՀՀ դրամ: Նկատում ենք, որ համեմատ դիտարկվող ժամանակաշրջանի 2015 թ-ին սուբվենցիաներ և այլ դոտացիաներ են տրամադրվել: Այստեղից եզրակացնում ենք, որ չնայած 2016-2018 թթ վերոնշյալ հոդվածներով եկամուտները կտրուկ նվազել են, սակայն համայնքային բյուջեն չի նվազել: Սա

խոսում է համայնքների միավորումից հետո սեփական եկամուտների հավաքագրելիության աստիճանի մեծացման մասին:

Վերադառնալով հետազոտության խնդիրներին դիտարկենք աղբահանության ոլորտում կատարված ծախսերի դինամիկան՝

Գծապատկեր 20. Դիլիջան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներում աղբահանության ոլորտում 2014-2017թթ կատարված և 2018թ պլանավորված ծախսերի դինամիկան/հազ դրամ



Ինչպես տեսնում ենք աղբահանության ոլորտում աշխատանքներ իրականացվել են միայն Դիլիջան և Թեղուտ համայնքներում: Միավորումից հետո աղբահանության ծախսերը աճել են: Ոլորտին հատկացվող ծախսերը համայնքի բյուջեում 2014-2018թթ դինամիկայում համապատասխանաբար ունեցել են հետևյալ տեսակարար կշիռները՝ 32,5%, 13.5%, 9,9% 11% և 9,7%, իսկ Թեղուտում՝ 4% և 6,9%: Այստեղից պարզ է դառնում, որ խոշորացումից հետո աղբահանության ոլորտին պակաս ուշադրություն է դարձվել: Հասկանալու համար թե համայնքում ոլորտային ինչ աշխատանքներ են իրականացվել ոլորտային ծախսերը դիտարկենք ըստ բյուջեի վարչական և ֆոնդային մասերի.

Աղյուսակ 7.Դիլիջան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներում աղբահանության ոլորտում 2014-2017 թթ կատարված և 2018թ պլանավորված ծախսերը ըստ վարչական և ֆոնդային մասերի՝

		Դիլիջան	Աղավնավանք	Գոշ	Հովիտ	Թեղուտ	Խաչարձան	Հաղարծին
2014	Վարչ. %	40				100		
	Ֆոնդ. %	60				0		

	Ընդ/հազ դ	*136237*				*1203,5*		
2015	Վարչ. %	92,5				100		
	Ֆոնդ. %	7,5				0		
	Ընդ/հազ դ	*62951,3*				*1205*		
2016	Վարչ. %	93,5						
	Ֆոնդ. %	6,5						
	Ընդ/հազ դ	*65540,6*						
2017	Վարչ. %	97,5						
	Ֆոնդ. %	2,5						
	Ընդ/հազ դ	*79142*						
2018	Վարչ. %	98,3						
	Ֆոնդ. %	1,7						
	Ընդ/հազ դ	*92797*						

Աղյուսակից նկատում ենք, որ կապիտալ բնույթի ծախսերը դինամիկայում նվազել են: Կապիտալ ծախսերն ուղղված են եղել մեքենա սարքավորումների ձեռքբերմանը: Վարչական ծախսերի ավելացումը ևս պայմանավորված է եղել մեքենա սարքավորումների ընթացիկ պահպանման ծախսերով[20]:

Համաձայն Դիլիջանի 2018թ ՏԱՊ-ի նախատեսվում է Դիլիջան բնակավայրում աղբահանություն իրականացնել շաբաթական 6 օր, իսկ մյուս բնակավայրերում շաբաթական երկու անգամ: Այստեղ նկատում ենք տարբերակված մոտեցում՝ նոր համայնքում ներառված բնակավայրերի նկատմամբ: Իհարկե դրական է այն, որ մի շարք համայնքներում մինչ խոշորացումն ընդհանրապես աշխատանքներ չեն իրականացվել այս ոլորտում, իսկ խոշորացումը բյուջեի միավորման և մեծացման արդյունքում նպաստել է այս համայնքներում աղբահանության աշխատանքների իրականացմանը, սակայն սա դեռ չի նշանակում որ շաբաթական երկու անգամ աղբահեռացումը համայնքում նորմալ է: Անգամ ոչ մեծ ծավալների հասնող աղբի չհեռացումը ամառային շրջանում հակասանիտարական և վտանգավոր է շրջակա միջավայրի համար:

Դիլիջանի 2018թ ՏԱՊ-ով նախատեսված է նաև սանիտարական մաքրման աշխատանքներ Դիլիջան, Թեղուտ և Հաղարծին համայնքներում[21]:

Գծապատկեր 21. Դիլիջան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներում աղբահանության ծախսը մեկ բնակչի հաշվով 2014-2018թթ-ին/հազ դրամ.

[20] http://www.dilijancity.am/Pages/NewBudget/Out/result.aspx
[21] http://tavush.mtad.am/tap/ Դիլիջան ՏԱՊ 2018, էջ 27



Մեկ բնակչի հաշվով ծախսը խոշորացումից հետո նվազել է: Այստեղ ևս նկատվում է խոշորացման արդյունքում մի համայանքի միջոցների օգտագործումը՝ մյուս համայնքներում ծառայության մատուցումն ապահովելու նպատակով: Սակայն դինամիկան ցույց է տալիս որ այս ցուցանիշը յուրաքանչյուր հաջորդ տարին ավելի բարձր արդյունք է ապահովում: Ստացվում է որ ժամանակի ընթացքում խոշորացումը նպաստում է համաչափ զարգացմանը:

Դիտարկենք նաև աղբահանության վճարների հավաքագրելիության փոփոխությունն ըստ տարիների՝

Գծապատկեր 22. Դիլիջան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներում 2014-2017թթ հավաքագրված և 2018թ-ին պլանավորված աղբահանության վճարները/հազ դրամ



Աղբահանության վճարներ հավաքագրվել են Դիլիջան և Թեղուտ համայնքներում: Դինամիկայում վճարների հավաքագրելիության աստիճանը բարձրացել է:

Գծապատկեր 23. Դիլիջան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներում լուսավորության ոլորտի ծախսերը 2014-2018թթ-ին/ հազ դ



Այս ոլորտում կատարված ծախսերը խոշորացումից հետո բացարձակ ցուցանիշով աճել են: Ոլորտային ծախսերը համայնքային բյուջեում 2014-2018թթ համապատասխանաբար ունեցել են հետևյալ տեսակարար կշիռները՝ Դիլիջանում 8,4%, 9,5%, 7%, 7% և 5,8%, Գոշում՝ 3% և 1%, Թեղուտում՝ 1,4% և 2,9%, իսկ

Հաղարծինում 0,8% և 1%: Միավորումից հետո այս ոլորտի «կարևորությունը» ևս նվազել է Դիլիջան համայնքում: Հարկ է նշել, որ մյուս բնակավայրերում, որտեղ մինչ խոշորացումը աշխատանքներ չեն եղել կամ համեմատաբար քիչ են եղել, ապա խոշորացումից հետո այս բնակավայրերում ոլորտային դրական շարժ է նկատվում:

Դիտարկելով ըստ ֆոնդային և վարչական մասերի նկատում ենք, որ հիմնական ընթացիկ ծախսն արվել է էներգետիկ ծառայությունների ձեռքբերման և հենասյուների կառուցման ուղղությամբ: Այստեղ հարց է առաջանում արդյոք բոլոր բնակավայրերում անհրաժեշտ քանակով լուսավորող հենասյուներ կան, թե էներգետիկ ծախսի ավելացման արդյունքում լուսատուների ավելացմանը պակաս է ուշադրություն է դարձվում:

Աղյուսակ 8.Դիլիջան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներում լուսավորության ոլորտում 2014-2017թթ կատարված և 2018թ պլանավորված ծախսերը ըստ բյուջեի վարչական և ֆոնդային մասերի

		Դիլիջան	Աղավնավանք	Գոշ	Հովիտ	Թեղուտ	Խաչարձան	Հաղարծին
2014	Վարչ. %	86%		100 %		64%		100%
	Ֆոնդ. %	14%				36%		
	Ընդ/հազ դ	*35361*		*700*		*421,5*		600
2015	Վարչ. %	83,5%		100 %		71%		100%
	Ֆոնդ. %	16,5%				29%		
	Ընդ/հազ դ	*44178*		*300*		*510,9*		*786,4*
2016	Վարչ. %	90%						
	Ֆոնդ. %	10%						
	Ընդ/հազ դ	*47567*						
2017	Վարչ. %	94,7%						
	Ֆոնդ. %	5,3%						
	Ընդ/հազ դ	*50142*						
2018	Վարչ. %	96%						
	Ֆոնդ. %	4%						
	Ընդ/հազ դ	*55518*						

Համաձայն մեր կողմից իրականացված մոնիթորինգի արդյունքների դիտարկված 20 (11 կենտրոնական և 9 երկրորդական) փողոցներից 60%-ում առկա է եղել գիշերային լուսավորություն[22]: Սակայն կապիտալ ծախսերը յուրաքանչյուր հաջորդ տարին նվազել են: Ընդհանրացնելով դիտարկման արդյունքները 2018 թ-ի համար ստանում ենք, որ համայնքում ընդհանուր գիշերային լուսավորության ապահովման խնդիրը լուծվելու է ոլորտին հատկացված ծախսերի 4%-ով, այն դեպքում երբ այդ խնդիրը կազմում է ամբողջությամբ լուսավոր համայնք ունենալու

[22] «ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ՝ ՀԱՆՈՒՆ ԽԵԼԱՑԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ» Լուսավորության զեկույց, էջ 77

40%-ը կամ ավելին/հաշվի առնելով որ մեր կողմից ավելի շատ կենտրոնական փողոցներ են դիտարկվել քան երկրորդական, իսկ խնդիրները ավելի շատ թաքնված են երկրորդական փողոցներում/: Այստեղ օպտիմիզացման խնդիր է առաջ գալիս, որը հնարավոր է իրականացնել օգտագործվող լամպերը խնայլամպերով փոխարինելու շնորհիվ (Նշենք որ համայնքում լամպերի 46,8%-ն է էներգախնայող):

Ինչ վերաբերում է մեկ բնակչի հաշվով կատարվող ծախսերի դինամիկային ապա՝

Գծապատկեր 24. Դիլիջան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներում լուսավորության ոլորտում 2014-2017թթ կատարված և 2018թ պլանավորված ծախսերը մեկ բնակչի հաշվով/հազ դ.



Ինչպես տեսնում ենք մեկ բնակչի հաշվով ծախսերը աճել են նախկին համայնքների ցուցանիշների նկատմամբ՝ բացառությամբ Դիլիջան համայնքի:

Ճանապարհաշինություն

Դիլիջան համայնքում ճանապարհաշինության ոլորտում կատարված ծախսերը միավորումից հետո նվազել են՝ հակառակ այն բանի որ ընդհանուր բյուջեն աճել է (գծապատկեր 25):

Գծապատկեր 25. Դիլիջան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներում ճանապարհաշինության ոլորտում 2014-2017թթ կատարված և 2018թ պլանավորված ծախսերը/հազ դ



Դիտարկված ժամանակաշրջանում կատարված ծախսերի մեծ մասը եղել են կապիտալ բնույթի ծախսեր, սակայն մեր կողմից դիտարկված 10 փողոցներից միայն մեկն է եղել բարձր որակի ասֆալտապատված[23]: Համաձայն մեր կողմից իրականացված հարցումների հարցմանը մասնակցած բնակչության կշռող մեծամասնության՝ 83%-ի կարծիքով ճանապարհների բարեկարգ լինելու հարցը չափազանց կարևոր է[24]: Ոլորտին հատկացվող ծախսերը 2014-2018 թթ համայնքային բյուջեում ունեցել է հետևյալ տեսակարար կշիռը՝ Դիլիջանում 35,9%, 18,7%, 6%, 6,7% և 7,7%, Գոշում՝ 3,4% և 3,6%, Թեղուտում 9,9% և 6,8% իսկ Հաղարծինում 1,2% և 1,3%: Խնդրի արդիականությանը համապատասխան ուշադրության չի արժանանում համայնքային իշխանությունների կողմից:

Աղյուսակ 9.Դիլիջան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներում ճանապարհաշինության ոլորտում 2014-2017թթ կատարված և 2018թ պլանավորված ծախսերը ըստ վարչական և ֆոնդային մասերի՝

		Դիլիջան	Աղավնավանք	Գոշ	Հովիտ	Թեղուտ	Խաչարձան	Հաղարծին
2014	Վարչ. %	0		0		100		0
	Ֆոնդ. %	100		100		0		100
	Ընդ/հագ դ	*150170*		*779*		*2930*		900
2015	Վարչ. %	0		0		100		0
	Ֆոնդ. %	100		100		0		100
	Ընդ/հագ դ	*87218*		*900*		*1190*		*900*
2016	Վարչ. %	2						
	Ֆոնդ. %	98						
	Ընդ/հագ դ	*39515*						

[23]ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ՝ ՀԱՆՈՒՆ ԽԵԼԱՑԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ, «Ներհամայնքային ճանապարհների սպասարկում» զեկույց, Գրաֆիկ 20
[24] ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ՝ ՀԱՆՈՒՆ ԽԵԼԱՑԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ, «Ներհամայնքային ճանապարհների սպասարկում» զեկույց, Աղյուսակ 2.5.2

2017	Վարչ. %	2,3						
	Ֆոնդ. %	97,7						
	Ընդ/հազ դ	*46969*						
2018	Վարչ. %	5						
	Ֆոնդ. %	95						
	Ընդ/հազ դ	*73508*						

Համայնքների միավորումից հետո աճել է ֆոնդային բնույթի ծախսերը: Միավորումը նպաստել է երկարաժամկետ լուծումներ գտնելուն: Ընդհանուր ստացվում է, որ համայնքապետարանի կողմից իրականացվում են ճանապարհաշինական աշխատանքներ, սակայն խնդրի կարևորությունը չի նվազում, և զուգահեռաբար համայնքապետարանն է սկսում նվազեցնել ոլորտին հատկացվող ֆնանսական մջոցները:

Գծապատկեր 26. Դիլիջան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներում ճանապարհաշինության ոլորտում 2014-2017թթ կատարված և 2018թ պլանավորված ծախսերը մեկ բնակչի հաշվով/հազ դ



Միավորումից հետո մեկ բնակչի հաշվով ծախսերը կտրուկ նվազել են Դիլիջան համայնքի բնակիչների համար՝ 2016 թ-ին 2015թ-ի համեմատ 70%: Միավորումից հետո դինամիկ աճ է նկատվում, սակայն ավելի փոքր աճի ցուցանիշով քան մինչ խոշորացումն էր՝ 2017թ-ին 20%, 2018թ-ին 55%:

2.2 Նոյեմբերյան համայնք

Նոյեմբերյան համայնքը վերաձևավորվել է 17.06.2016թ. ՀՕ-100-Ն «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի պահանջով: Տավուշի մարզի խոշորացված Նոյեմբերյան համայնքում ընդգրկվել են Նոյեմբերյան, Բաղանիս, Բարեկամավան, Բերդավան, Դովեղ, Կոթի, Ոսկեպար, Ոսկեվան և Ջուջևան համայնքները: Մինչ ուսումնասիրվող ոլորտներին անդրադառնալը դիտարկենք ընդհանուր բյուջեն, պետբյուջեից հատկացվող դոտացիոն հատկացումները՝ հասկանալու միավորման հավանական ազդեցությունը բյուջեի ծավալների փոփոխման հարցում:

Գծապատկեր 27. Նոյեմբերյան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքների 2014-2017թթ-ի կատարված և 2018թ պլանավորված բյուջեները/հազ դ.



Համայնքների միավորումից հետո համայնքների միասնական բյուջեն 2016թ-ին նվազել է 15,4%-ով՝ 73,8 մլն ՀՀ դրամով, այնուհետև 2018 թ-ին պլանավորվել է 21% աճ, ինչը գերազանցում է մինչ խոշորացումը եղած բյուջեի ցուցանիշը: Դիտարկենք նաև պետբյուջեից հատկացվող դոտացիաների դինամիկան:

Գծապատկեր 28. Նոյեմբերյան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներին պետբյուջեից 2014-2017թթ-ի հատկացված և 2018թ պլանավորված դոտացիաները/հազ դ



Ինչպես տեսնում ենք համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաները չեն նվազել՝ անգամ ավելացել են: Սակայն եկամուտների ուսումնասիրության ընթացքում պարզվեց, որ այս համայնքներում ստացել են նաև սուբվենցիաներ և այլ դոտացիաներ, որոնք ևս անհրաժեշտ է դիտարկել:

Նոյեմբերյան համայնքում ևս սուբվենցիոն հատկացումներ են եղել: 2014-2018 թթ դինամիկայում Նոյեմբերյան համայնքում սուբվենցիաները համապատասխանաբար եղել են հետևյալ ծավալների՝ 4մլն, 4,9մլն, 8,8մլն, 10,6 մլն և 7,7մլն: 2014 թ-ին Բարեկամավանում՝ 1 մլն, Բերդավանում 3 մլն, Կոթիում 153 հազ, Ոսկեպարում 23 հազ, Ոսկևանում 100 հազ և Ջուջևանում 28 հազ դրամ: 2015 թ-ին Բարեկամավանում 10 մլն, Բաղանիսում 9 մլն, Բերդավանում 7 մլն, Դովեղում 1,3 մլն, Կոթիում 9,7 մլն, Ոսկեպարում 6 մլն, Ոսկևանում 8 մլն և Ջուջևանում 7,6 մն դրամ: Նկատում ենք, որ 2015 թ-ին բոլոր համայնքներին տրամադրված սուբվենցիոն հատկացումները կտրուկ մեծ է եղել՝ 2014 թ-ի համեմատ աճել է 13,5%, իսկ 2016 թ-ին նվազել է մոտ 87%-ով՝ 55,8 մլն ՀՀ դրամով, ընդհանուր տարբեր տարիների համեմատ մոտ 7 անգամ ավել է եղել: Այն կազմել է 2015 թ-ի բյուջեի 13,5%-ը, իսկ 2016 թ-ի 2,1%-ը: Սրանով էլ կարելի է պայմանավորել 2015 թ-ի բյուջեի մեծությունը: Ուշագրավ է նաև այն, որ 2015 և 2016 թթ համայնքը ստացել է այլ դոտացիաներ, որոնք կազմել են բյուջեի համապատասխանաբար 7,5% և 7,8%-ը: 2015 թ-ին այլ դոտացիաներ ստացել են Նոյեմբերյանը 24,7 մլն, Դովեղը 3 մլն, Բերդավանը1,9 մլն, Բարեկամավանը՝ 1,8 մլն, Ոսկևանը 1,5 մլն, Ոսկեպարը 1 մլն, Բաղանիսը՝ 560 հազ և Ջուջևանը՝ 400 հազ դրամ: 2016 թ-ին Նոյեմբերյանը ստացել է 31,5 մլն ՀՀ դրամի այլ դոտացիա: Այլ դոտացիաները 2017 թ-ից այլ դոտացիաներ չեն տրամադրվել, սակայն համայնքի բյուջեն աճել է, ինչը նշանակում է, որ 2017 թ-ից աճել է համայնքի սեփական եկամուտների հավաքագրելիությունը:

Դիտարկենք ոլորտային ծախսերը: Նշենք, որ Նոյեմբերյանում ևս համայնքապետարանից ստացված տվյալների և «Տարածքային կառավարման և զարգացման նախարարության» կայքում տեղադրված ֆինանսական ցուցանիշների մեջ առկա էր տարբերություններ, և հիմք ենք վերցրել նախարարության կայքում արտացոլված տվյալները: Աղբահանության ոլորտին հատկացված ծախսերը մինչ խոշորացումը նվազել են, իսկ խոշորացումից հետո աճել՝

Գծապատկեր 29. Նոյեմբերյան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներում աղբահանության ոլորտում 2014-2017թթ կատարված և 2018 թ-ին պլանավորված ծախսերը /հազ դ



Գծապատկերից երևում է որ 2015 թ-ին աղբահանության ոլորտում իրականացվող ծախսերը նվազել են, սակայն 2016 թ-ից դինամիկ աճ է գրանցվել: Համայնքային բյուջեում ունեցած տեսակարար կշիռը հետևյալն է՝

Աղյուսակ 10.Նոյեմբերյան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներում աղբահանության ոլորտում 2014-2017թթ կատարված և 2018 թ-ին պլանավորված ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուր բյուջեում.

	Նոյեմբերյան	Բարեկամավան	Բաղանիս	Բերդավան	Դովեղ	Կոթի	Ոսկեպար	Ոսկևան	Ջուջևան
2014	20%	0.03%	3.2%	1.4%	2.7%	3%	0.06%	2.2%	0.06%
2015	14%	0.02%	1.6%	0.9%	2.8%	2.3%	0.04%	1.8%	0.03%
2016	7.5%								
2017	10.7%								
2018	12%								

Տարբեր համայնքների ընդհանուր բյուջեում աղբահանության ծախսերի կշիռների էական շեղումը հստակ թույլ է տալսի ենթադրել, որ աղբահանության

մակարդակը համայնքներում էապես տարբերվել է: Ինչպես ոլորտի ծախսերը բացարձակ արժեքով այնպես էլ դրանց տեսակարար կշիռը համայնքային բյուջեում նվազել է մինչ 2016 թ-ը, և 2017 թ-ից (խոշորացումից հետո) կրկին աճել է: Ոլորտային ծախսերն ամբողջությամբ եղել են վարչական բնույթի:

Գծապատկեր 30. Նոյեմբերյան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներում աղբահանության ոլորտում կատարված ծախսերը մեկ բնակչի հաշվով 2014-2018թթ-ին



Այս ցուցանիշն ունեցել է նույն դինամիկան ինչ աղբահանության ոլորտում կատարված ծախսերը: Միավորումից հետո այն նվազել է, սակայն 2016-2018թթ դինամիկայում աճել՝ չգերազանցելով մինչ խոշորացումը եղած ցուցանիշը: Համայնքապետարանից ստացված տվյալներից ելնելով կարող ենք ներկայացնել թե աղբահանության ոլորտի ծախսերը 2016թ և 2017թ ըստ բնակավայրերի ինչպես է բաշխվել: Համայնքապետարանի կողմից ծախսերը ներկայացվել է ըստ բնակավայրերի, իսկ ՏԿԶՆ կայքում տեղադրված բյուջեում ծախսը ներկայացված է միասնական համայնքի համար: Քանի որ բացարձակ ցուցանիշների միջև կար տարբերություններ հնարավոր սխալներից խուսափելու նպատակով ըստ բնակավայրերի ծախսը կներկայացնենք տոկոսային հարաբերությամբ՝

Աղյուսակ 11.Նոյեմբերյան խոշորացված համայնքի վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներում աղբահանության ոլորտում 2016-2017թթ կատարված և 2018 թ-ին պլանավորված ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուր աղբահանությանն ուղղված ծախսերի մեջ և բնակչության տեսակարար կշիռներն ըստ համայնքների.

		Նոյեմբերյան	Բարեկամավան	Բաղանիս	Բերդավան	Դովեղ	Կոթի	Ոսկեպար	Ոսկևան	Ջուջևան

2016	Ֆինմիջոց.	86%	0,02%	2,3%	2,6%	1,2%	4,8%	0,04%	2,3%	0,4
	Բնակչութ.	36%	3,1%	5,5%	21%	4%	13%	5,7%	8%	3,7
2017	Ֆինմիջոց.	5,5%	4,6%	15,6%	0,25%	17%	0,05%	32%	9,5%	15,5
	Բնակչութ.	36%	3,1%	5,5%	21%	4%	13%	5,7%	8%	3,7
2018	Ֆինմիջոց.	7%	8%	37,6%	0,15%	0,03%	0,06%	0,1%	14,5%	32,5
	Բնակչութ.	36%	3,1%	5,5%	21%	4%	13%	5,7%	8%	3,7

Հետաքրքիր պատկեր է ստացվում: Արձանագրենք, որ խոշորացումից հետո ծախսերի կենտրոնացում չի եղել համայնքի կենտրոն Նոյեմբերյանում, սակայն ըստ համայնքներում եղած բնակչության տեսակարար կշռի էլ չի բաշխվել միջոցները: Բյուջեի ծախսերի տարանջատումն ըստ բնակավայրերի խոսում է այն մասին, որ համայնքում դեռ չի կիրառվում միասնականության սկզբունքը:

Մեր կողմից իրականացված հարցումների արդյունքում պարզել ենք, որ բնակիչները ընդհանուր առմամբ գոհ են աղբահանության ոլորտում համայնքապետարանի կողմից մատուցվող ծառայություններից: Բացի Բարեկամավան և Ջուջևան բնակավայրից, մյուս բոլոր բնակավայրերի դեպքում տրվել են միջինից բարձր գնահատաններ՝ ինչին էլ ուղղված աշխատանքներ են իրականացվել: Համայնքապետարանի միջին գնահատականը ամբողջ խոշորացված համայնքի համար կազմել է 6,7միավոր հնարավոր 10-ից:[25]

Գծապատկեր 31. Նոյեմբերյան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներում աղբահանության ծառայության համար բնակիչներից 2014-2017թթ հավաքագրված և 2018թ պլանավորված վճարները/հազ դ



[25] «ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ՝ ՀԱՆՈՒՆ ԽԵԼԱՑԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ» Աղբահանության զեկույց, էջ 29 գրաֆիկ18

Աղբահանության վճարներ հավաքագրվել է միայն Նոյեմբերյան համայնքից: Խոշորացումից հետո հավաքագրելիության մակարդակն աճել է՝ 2017 թ-ին 34% իսկ 2018թ-ին 83%[26]: Համաձայն Նոյեմբերյանի 2018 թ-ի ՏԱՊ-ի մեկ բնակչի հաշվով հավաքագրվում է 100 ՀՀ դրամ[27]: Այստեղից եզրակացնում ենք, որ մինչ խոշորացումը Նոյեմբերյանի մեջ մտնող մյուս համայնքներում աղբահանության վճարներ չեն հավաքագրվել, և միավորումը նպաստել է այս համայնքներում աղբահանության դիմաց վճարելու մշակույթի ստեղծմանը:

Լուսավորության ոլորտին հատկացված ծախսերը համայնքների միավորումից հետո նվազել են՝ 2016 թ-ին 65%, իսկ 2017 և 2018 թթ-ին աճել՝ համապատասխանաբար 9% և 2%:

Գծապատկեր 32. Նոյեմբերյան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներում լուսավորության ոլորտում 2014-2017թթ կատարված և 2018 թ-ի համար պլանավորված ծախսերը/հազ դ



Համաձայն համայնքապետարանից ստացված տվյալների 2015 թ-ի շեղումը ընդհանուր դինամիկայից պայմանավորված է կապիտալ բնույթի ծախսերով:

Աղյուսակ 12.Նոյեմբերյան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներում լուսավորության ոլորտում 2014-2017թթ կատարված և 2018 թ-ի համար պլանավորված ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուր բյուջեի մեջ.

	Նոյեմբերյան	Բարեկամավան	Բաղանիս	Բերդավան	Դովեղ	Կոթի	Ոսկեպար	Ոսկևան	Ջուջևան

[26] Նախորդ տարվա համեմատ

[27] http://tavush.mtad.am/tap/, Նոյեմբերյան 2018 թ ՏԱՊ, էջ 41, ծրագիր 1, ելքային ցուցանիշներ կետ 3

2014	4.9%		2%	0.9%	1.6%	0.4%	4.8%	17%	
2015	12%		10%	0.6%	2%	0.08%		30%	
2016	3.4%								
2017	3.6%								
2018	3%								

Միավորումից հետո համայնքային բյուջեի մոտ 3%-ն է հատկացվել լուսավորության ոլորտին: Ստացվում է, որ նոր ձևավորված համայնքում լուսավորության ոլորտին պակաս ուշադրություն է դարձվել: Դիտարկենք ընթացիկ և կապիտալ բնույթի ոլորտային ծախսերը ըստ համայնքների:

Աղյուսակ 13. Նոյեմբերյան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներում լուսավորության ոլորտում 2014-2017թթ կատարված և 2018թ պլանավորված ծախսերը ըստ բյուջեի վարչական և ֆոնդային մասերի

		Նոյեմբերյան	Բաղանիս	Բարեկամավան	Բերդավան	Դովեղ	Կոթի	Ոսկեպար	Ոսկևան	Ջուջևան
2014	Վարչ. %	100	100		100	100	100	100	7	
	Ֆոնդ. %	0	0		0	0	0	0	93	
	Ընդ/հազ դ	*6915,1*	*470*		*542,5*	*175*	*173,5*	998,2	6164,3	
2015	Վարչ. %	40	11		100	100	100		53,3	
	Ֆոնդ. %	60	89		0	0	0		46,6	
	Ընդ/հազ դ	*20869,5*	*4478,9*		*456,9*	*252,1*	*45,2*		*12973,6*	
2016	Վարչ. %	66								
	Ֆոնդ. %	34								
	Ընդ/հազ դ	*13693,7*								
2017	Վարչ. %	53								
	Ֆոնդ. %	47								
	Ընդ/հազ դ	*14965,8*								
2018	Վարչ. %	44								
	Ֆոնդ. %	56								
	Ընդ/հազ դ	*15240,4*								

Աղյուսակից նկատում ենք, որ բացառությամբ 2015 թ-ի, միավորումից հետո լուսավորության ոլորտում կապիտալ ոլորտին հատկացվող ծախսերն աճել են: Սա դրական է գնահատվում՝ ոլորտում երկարաժամկետ ծառայություններ ապահովելու տեսանկյունից:

Մեկ բնակչի հաշվով ծախսը միավորումից հետո նվազել է:

Գծապատկեր 33. Նոյեմբերյան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներում լուսավորության ոլորտում կատարված ծախսերը մեկ բնակչի հաշվով 2014-2018թթ-ին/հազ դրամ



Մեկ բնակչի հաշվով կատարված ծախսը միավորումից հետո Նոյեմբերյան, Բաղանիս և Ոսկևան համայնքների համար նվազել է: Միավորումից հետո ըստ բնակավայրերի ծախսը դիտարկելով նույն տրամաբանությամբ ինչ աղբահանության ոլորտում դիտարկեցինք նկատում ենք, որ ծախսերը մեծ տեսակարար կշիռ ունեցողները կրկին Նոյեմբերյան, Բաղանիս և Ոսկևան համայնքներն են՝ բացառությամբ 2017 թ-ի:

Աղյուսակ 14 Նոյեմբերյան խոշորացված համայնքի վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներում լուսավորության ոլորտում կատարված ծախսերի տեսակարար կշիռը համայնքի ոլորտային ծախսերի մեջ և բնակչության տեսակարար կշիռն ըստ համայնքների.

		Նոյեմբերյան	Բարեկամավան	Բաղանիս	Բերդավան	Դովեղ	Կոթի	Ոսկեպար	Ոսկևան	Ջուջևան
2016	Ֆինմիջոց.	39%		14%	5,8%	0,7%	12,6%		27,5%	
	Բնակչութ.	36%	3,1%	5,5%	21%	4%	13%	5,7%	8%	3,7
2017	Ֆինմիջոց.	18,7%		3,9%	3,6%	6,6%	48,7%	8%	4,8%	5,3
	Բնակչութ.	36%	3,1%	5,5%	21%	4%	13%	5,7%	8%	3,7
2018	Ֆինմիջոց.	42,5%		10%	8,6%	6,5%	10%	9%	9,3%	3,2
	Բնակչութ.	36%	3,1%	5,5%	21%	4%	13%	5,7%	8%	3,7

Ինչպես տեսնում ենք Աղյուսակից ֆինանսական միջոցների բաշխվածությունը չի համապատասխանում բնակչության բաշխվածությանը: Մեր կողմից իրականացված սոցհարցումների ժամանակ բացի Բարեկամավան և Ջուջևան բնակավայրից, մյուս բոլոր բնակավայրերի դեպքում տրվել են միջինից բարձր գնահատաններ: Առավել բարձր գնահատականներ են տրվել Բերդավան, Բաղանիս, Ոսկեվան և Ոսկեպար բնակավայրերի բնակիչների կողմից: Համայնքապետարանի միջին գնահատականը ամբողջ խոշորացված համայնքի համար կազմել է 6,7միավոր

հնարավոր 10-ից :[28] Բնակիչների կարծիքն ու բյուջեի բաշխվածությունը նույն ուղղվածությունն ունեն: Ուստի անհրաժեշտ է անհապաղ միջոցառումներ ձեռնարկել Բարեկամավան և Ջուջևան համայնքներում լուսավորություն ապահովելու համար: Համաձայն Նոյեմբերյան 2018 թ ՏԱՊ-ի նախատեսվում է Բարեկամավան, Կոթի, Ոսկեպար և Ջուջևան գյուղերի արտաքին լուսավորության համակարգերի ընդլայնում, որը ինչպես տեսանք բյուջեում արտացոլված չէ:

Ճանապարհաշինության ոլորտին հատկացվող ծախսերն ունեցել են հետևյալ դինամիկան՝

Գծապատկեր 33. Նոյեմբերյան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներում ճանապարհաշինության ոլորտում 2014-2017թթ կատարված և 2018թ պլանավորված ծախսերը/հազ դ



Համայնքների միավորումից հետո ոլորտին հատկացվող ծախսերը բացարձակ ցուցանիշով մեծացել են, բայց կանոնավոր կերպով աճ չեն գրանցել:

Ընդհանուր համայնքային բյուջեում ունեցած տեսակարար կշիռը ևս աճել է, բացառությամբ 2017 թ-ի՝

Աղյուսակ 15 Նոյեմբերյան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներում ճանապարհաշինության ոլորտին 2014-2017թթ հատկացված և 2018թ պլանավորված ծախսերի տեսակարար կշիռը համայնքի բյուջեի մեջ.

	Նոյեմբերյան	Բարեկամավան	Բաղանիս	Բերդավան	Դովեղ	Կոթի	Ոսկեպար	Ոսկևան	Ջուջևան

[28]«ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ՝ ՀԱՆՈՒՆ ԽԵԼԱՅԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ» Լուսավորության զեկույց, էջ 91 Գրաֆիկ 18

2014	0,68%				0,2%	1,3%			
2015	0,56%					0,76%			
2016	2,2%								
2017	0,48%								
2018	7%								

Կատարված աշխատանքների բնույթը հասկանալու նպատակով դիտարկենք ընթացիկ և կապիտալ ծախսերի բաշխվածությունը և դինամիկան:

Աղյուսակ 16. Նոյեմբերյան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներում ճանապարհաշինության ոլորտում կատարված ծախսերը ըստ բյուջեի վարչական և ֆոնդային մասերի 2014-2018թթ-ին

		Նոյեմբերյան	Բաղանիս	Բարեկամավան	Բերդավան	Դովեղ	Կոթի	Ոսկեպար	Ոսկևան	Ջուջևան
2014	Վարչ. %	100				100	100			
	Ֆոնդ. %	0				0	0			
	Ընդ/հազ դ	*948,3*				*123*	*600*			
2015	Վարչ. %	40					0			
	Ֆոնդ. %	60					100			
	Ընդ/հազ դ	*949,3*					*435*			
2016	Վարչ. %	7								
	Ֆոնդ. %	93								
	Ընդ/հազ դ	*9028,7*								
2017	Վարչ. %	0								
	Ֆոնդ. %	100								
	Ընդ/հազ դ	*2000*								
2018	Վարչ. %	0								
	Ֆոնդ. %	100								
	Ընդ/հազ դ	*35300*								

Խոշորացումից հետո ծախսերը կապիտալ ուղղվածություն են ունեցել: 2016թ-ին ծախսերի 5,8%-ը կատրվել են Նոյեմբերյան համայնքում, 18%-ը Բերդավան, իսկ 76%-ը Կոթիում, ընդ որում կապիտալ ծախսերն իրականցվել են Կոթի և Բերդավան համայնքներում: 2018 թ-ի ՏԱՊ-ով նախատեսվում է Նոյեմբերյան քաղաքի փողոցների, Բերդավան, Կոթի, Ոսկեվան և Ոսկեպար գյուղերի ներբնակավայրային ճանապարհների և հենապատերի նորոգում: Նշենք, որ մեր կողմից իրականացված հարցումների ժամանակ Նոյեմբերյան համայնքում հարցվածների 91%-ի կարծիքով չափազանց կարևոր է ճանապարհաշինության հարցը, իսկ Բարեկամավան, Բերդավան և Ոսկևան համայնքներում՝ 100%[29]:

Մեկ բնակչի հաշվով ծախսի դինամիկան հետևյալն՝

[29] «ՄԱՄՆԱԿՑԱՅԻՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ՝ ՀԱՆՈՒՆ ԽԵԼԱՑԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ» Ճանապարհաշինության Զեկույց, էջ 83, Աղյուսակ 2.6.2

Գծապատկեր 34. Նոյեմբերյան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներում ճանապարհաշինության ոլորտում կատարված ծախսերը մեկ բնակչի հաշվով 2014-2018թթ-ին/հազ դրամ



Բացառությամբ 2017թ-ի մեկ բնակչի հաշվով ծախսը ևս աճել է խոշորացումից հետո:

Համայնքների միավորումից հետո ճանապարհաշինական աշխատանքներ իրականացվել են միայն Նոյեմբերյան համայնքում: Հետևաբար կարող ենք փաստել, որ մեկ բնակչի հաշվով ծախսի ավելացման արդյունքում միավորված մյուս համայնքներում ճանապարհաշինության ոլորտում բարելավումներ չեն եղել:

Գլուխ 3 Լոռու մարզում խոշորացված Ստեփանավան և Թումանյան համայնքներում 2014-2018 թթ ֆինանսական վերլուծություն՝ աղբահանության, լուսավորության և ճանապարհաշինության ոլորտներում

3.1 Ստեփանավան համայնք

Ստեփանավան համայնքը վերակազմավորվել է 2017 թ-ի հունիս ամսին՝ «ՏԻՄ օրենք»-ում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին որոշումով:[30] Նոր ձևավորված համայնքն իր մեջ ներառում է նախկին Ստեփանավան, Ուրասար և Կաթնաղբյուր համայնքները: Նոր ձևավորված համայնքում բյուջեն շարունակել է փոքր աճ գրանցել՝ 2014-2018թթ-ին համապատասխանաբար 6,5%, 2%, 9,8% և 8%:

Գծապատկեր 35. Ստեփանավան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքների 2014-2017թթ կատարված և2018թ-ին պլանավորված բյուջեները /հազ դ



Աճի ուղղությունը և պետական հոգածության միտումները հասկանալու համար դիտարկենք դոտացիաների դինամիկան ընտրված ժամանակաշրջանում:

Գծապատկեր 36. Ստեփանավան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներին պետբյուջեից 2014-2017թթ տրամադրված և 2018 թ-ին պլանավորված դոտացիաները/ հազ դ

[30] http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=5834&lang=arm



2015 թ-ին 2%-ով աճել է դոտացիաների չափը, 2016 թ-ին 0,2%-ով նվազել է, 2017 թ-ին 0,9%-ով աճել է, իսկ 2018 թ-ին 0,09% պակաս է պլանավորվել: Այս փոփոխությունները կարող են պայմանավորված լինել պետական բյուջեից համայնքներին տրվող դոտացիաների ընդհանուր բազայի տարբերությունով, և 2017 թ-ից կիրառվող նոր մեթոդաբանության հաշվարկով: Սակայն այս փոփոխությունները համայնքի ընդհանուր բյուջեի փոփոխության նկատմամբ փոքր փոփոխություններ են: Ստեփանավան համայնքում պետբյուջեից տրամադրվել են նաև նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ: Սուբվենցիաները տրամադրվել են միայն Ստեփանավան համայնքին, որը 2014-2018թթ դինամիկայում ունեցել է հետևյալ շարժը՝ 9,6մլն, 11,7 մլն, 11,7 մլն, 35,9 մլն և 10 մլն ՀՀ դրամ: Ցուցանիշը 2015թին 22% աճել է, 2016 թ-ին չի փոխվել, 2017 թ-ին 206% աճ և 2018 թ-ին անկում՝ 71%-ով: Հարկ է նշել, որ սեփական եկամուտները դինամիկ աճ են գրանցել: Համայնքների խոշորացման արդյունքում բյուջեն էական փոփոխություն չի կրել:

Վերադառնալով հետազոտության խնդիրներին դիտարկենք ոլորտային ծախսերը:

Գծապատկեր 37. Ստեփանավան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներում աղբահանության ոլորտին հատկացվող ծախսերը 2014-2018թթ/հազ դ



Աղբահանության ծախսեր մինչ միավորումը արվել են միայն Ստեփանավան համայնքում: Բացարձակ ցուցանիշով ոլորտին հատկացվող ծախսերն աճել են 1,7-12%: Ոլորտային ծախսերը մինչ միավորումը եղել են ընթացիկ ծախսեր, իսկ միավորումից հետո եղել են նաև կապիտալ բնույթի ծախսեր, ընդ որում 2017 թ-ին ոլորտի ծախսերի 98,1%-ով ստեղծվել է կապիտալ արժեք: Ոլորտային ծախսերի կշիռը համայնքային բյուջեում ունեցել են է հետևյալ դինամիկան՝ 15%, 14%, 14,9%, 12,8%, 13%, միավորումից հետո նվազել է:

Աղյուսակ 17.Ստեփանավան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներում աղբահանության ոլորտին 2014-2017թթ հատկացված և 2018թ-ին պլանավորված ծախսերը ըստ վարչական և ֆոնդային մասերի.

		Ստեփանավան	Կաթնաղբյուր	Ուրասար
2014	Վարչ. %	100		
	Ֆոնդ. %	0		
	Ընդ/հագ դ	*48555,7*		
2015	Վարչ. %	100		
	Ֆոնդ. %	0		
	Ընդ/հագ դ	*48505*		
2016	Վարչ. %	100		
	Ֆոնդ. %	0		
	Ընդ/հագ դ	*52460,1*		
2017	Վարչ. %	1,9		
	Ֆոնդ. %	98,1		
	Ընդ/հագ դ	*53379,8*		
2018	Վարչ. %	87,5		
	Ֆոնդ. %	12,5		
	Ընդ/հագ դ	*59879*		

Կապիտալ ծախսերի էությունը հասկանալու համար համայնքապետարանից բավարար տեղեկատվություն չենք ստացել: Համաձայն Լոռու մարզպետարանի կայքում տեղադրված ՏԱՊ-ի 2018 թ-ին ֆոնդային բյուջեով նախատեսվում է իրականացնել օգտագործման կանաչապատ տարածքների պահպանման, մշակման, ծառատնկման և ծառերի խնամքի աշխատանքներ: Ընթացիկ ծախսերով իրականացվելու են աղբահեռացման աշխատանքներ շաբաթական հինգ անգամ՝ 342 աղբամաններով:

Գծապատկեր 38. Ստեփանավան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներում աղբահանության ոլորտին հատկացվող ծախսերը մեկ բնակչի հաշվով 2014-2018թթ՝/հազ դ



Համայնքների միավորումից հետո 1 բնակչի հաշվով ծախսի նվազում է նկատվում՝ 2017թ-ին 7%, սակայն 2018 թ-ին ցուցանիշը 12,5 % ավել է պլանավորվել: Մինչ միավորումը և միավորումից հետո 1 բնակչի հաշվով կատարված ծախսը էական փոփոխության չի ենթարկվել Ստեփանավան համայնքի համար, սակայն Կաթնաղբյուր և Ուրասար համայնքներում էական և դրական փոփոխություն է նկատվում: Ստեփանավան համայնքում ցուցանիշի ոչ էական փոփոխությունը պայմանավորված է Կաթնաղբյուր և Ուրասար համայնքների բնակչության փոքր թվով, և բյուջեի դինամիկ աճով: Ցավոք Ստեփանավան համայնքից տեղեկատվություն չունենք թե միավորումից հետո ծախսերն ըստ բնակավայրերի ինչպիսի բաշխվածություն է ունեցել:

Լուսավորության ոլորտում կատարված ծախսերը Ստեփանավան համայնքում կազմում են համայնքային բյուջեի 2%-3,7%:

Գծապատկեր 39. Ստեփանավան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներում լուսավորության ոլորտին հատկացվող ծախսերը 2014-2018թթ /հազ դ



Լուսավորության ոլորտում ծախսեր կատարվել են Ստեփանավան և Կաթնաղբյուր համայնքներում: Դինամիկայում ոլորտին հատկացող ծախսերն աճել են, բացառություն է կազմում 2015թ-ը, երբ Կաթնաղբյուր համայնքում իրականացվել են կապիտալ բնույթի ծախսեր, այն կազմել է Կաթնաղբյուր համայնքի բյուջեի 43,5%-ը:

Համաձայն Ստեփանավան համայնքի 2018թ-ի ՏԱՊ-ի նախատեսվում է Ստեփանավան և Կաթնաղբյուր բնակավայրերում լուսավորության ցանցի սպասարկում իրականացնել, իսկ Ուրասար բնակավայրում լուսավորության ցանց կառուցել: Մարզպետարանի կայքում տեղադրված տարեկան աշխատանքային պլանն ուսումնասիրելիս անհամապատասխանություն ենք նկատում ֆինանսական ցուցանիշների մասով: Համաձայն Ստեփանավան համայնքի բյուջեի և նախնական պլանավորված[31], և հետագայում ճշգրտված բյուջետային ցուցանիշների ոլորտային ծախսերը պլանավորվել են 12,6 մլն ՀՀ դրամ, սակայն համաձայն ՏԱՊ-ում ներկայացված ֆինանսական ցուցանիշների ոլորտային ծախսերի համար համայնքային բյուջեից նախատեսված է 5 մլն ՀՀ դրամ, իսկ պետական բյուջեից 10,2 մլն ՀՀ դրամ՝ ընդհանուր 15,2 մլն ՀՀ դրամ[32]: Նշենք, որ ՏԱՊ-ը կազմվել է 2018թ-ի ապրիլի 13-ին, երբ համայնքային բյուջեն արդեն պլանավորված է եղել: Ստացվում է, որ համայնքային իշխանությունը նախատեսել է պետական բյուջեից ստանալ ֆինանսավորումը, և տնտեսել իր զումարները, սակայն հոկտեմբեր ամսին ճշգրտված տվյալներով համայնքային բյուջեում ցուցանիշները դեռ չեն նվազել:

Աղյուսակ 18.Ստեփանավան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներում լուսավորության ոլորտին 2014-2017թթ հատկացված և 2018թ-ին պլանավորված ծախսերը ըստ վարչական և ֆոնդային մասերի

		Ստեփանավան	Կաթնաղբյուր	Ուրասար
2014	Վարչ. %	100		

[31] http://lori.mtad.am/files/docs/30738.pdf էջ 10
[32] http://lori.mtad.am/files/docs/32982.pdf էջ 27

	Ֆոնդ. %	0		
	Ընդ/հազ դ	*8074,3*		
2015	Վարչ. %	100	0	
	Ֆոնդ. %	0	100	
	Ընդ/հազ դ	*8689,5*	*3795*	
2016	Վարչ. %	100		
	Ֆոնդ. %	0		
	Ընդ/հազ դ	*8730*		
2017	Վարչ. %	8		
	Ֆոնդ. %	92		
	Ընդ/հազ դ	*11911,2*		
2018	Վարչ. %	10,7		
	Ֆոնդ. %	89,3		
	Ընդ/հազ դ	*16763*		

Լուսավորության ոլորտի ծախսերը մինչ խոշորացումը հիմնականում եղել են ընթացիկ բնույթի՝ էլեկտրաէներգիայի ձեռքբերում: Կաթնաղբյուրում 2015 թ-ին եղել է կապիտալ բնույթի ծախս, որն այս ոլորտի դեպքում նշանակում է որ հենասյուներ են կառուցվել, սակայն 2015 և 2016 թթ վարչական մասում ծախսի բացակայությունից ելնելով կարող ենք ասել, որ հենասյուները լուսավորություն չեն ապահովել:

Գծապատկեր 40. Ստեփանավան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներում լուսավորության ոլորտին հատկացվող ծախսերը մեկ բնակչի հաշվով 2014-2017թթ կատարված և 2018թ պլանավորված ցուցանիշներ/ հազ դ



Դինամիկայում մեկ բնակչի հաշվով ծախսը աճել է /բացառությամբ 2015թ Կաթնաղբյուր բնակավայրի ցուցանիշի/: Իհարկե այստեղ ևս կարևոր է մեջբերել, որ Կաթնաղբյուր և Ուրասար համայնքներում բնակչության թիվը փոքր է, և միավորման արդյունքում միջինացված ցուցանիշը էական փոփոխություն չի կարող ունենալ:

Հուշող գործիք է ՏԱՊ-ը, որտեղ ներկայացված աշխատանքները ոգևորիչ չեն: Ծրագրում հատուկ ընդգծված են Կաթնաղբյուր և Ուրասար համայնքներում առկա խնդիրների ֆինանսավորման բացակայության մասին, որը գնահատվել է 5 մլն ՀՀ դրամ[33]: Սա նշանակաում է որ մեկ ընդհանուր համայնք մոտեցումը չի կիրառվում:

Ճանապարհաշինության ոլորտին հատկացվող ծախսերը Ստեփանավան համայնքի բյուջեում ունեցել է հետևյալ դինամիկան՝ 1,2%, 1%, 0%, 3%, 7,6%: Միավորումից հետո ոլորտին հատկացվող ծախսերն աճել են:

Գծապատկեր 41. Ստեփանավան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներում ճանապարհաշինության ոլորտին 2014-2017 թթ հատկացված և 2018 թ-ին պլանավորված ծախսերը /հազ դ



Հետաքրքիր պատկեր է ստացվել ճանապարհաշինության ոլորտում կատարվող ծախսերի դինամիկան: Բացի նախկին Ստեփանավան համայնքից ճանապարհաշինության ոլորտում ծախսեր՝ աշխատանքներ իրականացվել է Կաթնաղբյուր համայնքում միայն 2014թ-ին: 2016 թ-ին ընդհանրապես աշխատանքներ չեն իրականացվել: Կատարված աշխատանքների բնույթը հասկանալու համար դիտարկենք նաև ըստ վարչական և ֆոնդային մասերի տարանջատման՝

Աղյուսակ 19.Ստեփանավան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներում ճանապարհաշինության ոլորտում 2014-2017թթ կատարված և 2018թ-ի պլանավորված ծախսերը

		Ստեփանավան	Կաթնաղբյուր	Ուրասար
2014	Վարչ. %	0		100
	Ֆոնդ. %	100		0
	Ընդ/հազ դ	*4046,5*		*457*

[33] Նախորդ հղումը, էջ 11

2015	Վարչ. %	100		
	Ֆոնդ. %	0		
	Ընդ/հազ դ	*3954,4*		
2016	Վարչ. %			
	Ֆոնդ. %			
	Ընդ/հազ դ	*0*		
2017	Վարչ. %	7		
	Ֆոնդ. %	93		
	Ընդ/հազ դ	*12871,7*		
2018	Վարչ. %	0		
	Ֆոնդ. %	100		
	Ընդ/հազ դ	*34574,8*		

2014թ-ին կապիտալ աշխատանքներ են իրականացվել համայնքում, 2015թ-ին գրեթե նույն չափով ընթացիկ բնույթի ծախսեր՝ աշխատանքներ: 2016 թ-ին ընդհանրապես աշխատանքներ չեն իրականացվել այս ոլորտում, իսկ ահա 2017 և 2018 թթ-ին հիմնականում կապիտալ բնույթի աշխատանքներ են: Մյուս բնակավայրերից միայն Կաթնաղբյուրում է ճանապարհաշինության համար գումար հատկացվել: Համայնքի 2018թ ՏԱՊ-ում ճանապարհաշինության ոլորտի աշխատանքների ֆինանսավորման մասով ևս անհամապատասխանություն կա: Ծրագրում նախատեսվում է համայնքային բյուջեից հատկացնել 334 մլն ՀՀ դրամ[34], իսկ համայնքի բյուջեով նախատեսվել է 34,5 մլն ՀՀ դրամ:

Գծապատկեր 42. Ստեփանավան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներում ճանապարհաշինության ոլորտում 2014-2017թթ կատարված և 2018թ պլանավորված ծախսերը մեկ բնակչի հաշվով/ հազ դ



[34] http://lori.mtad.am/files/docs/32982.pdf էջ 27

Մեկ բնակչի հաշվով կատարված ծախսը դինամիկայում աճել է՝ բացառությամբ 2015 թ-ի։

3.2 Թումանյան համայնք

Թումանյան համայնքը վերաձևավորվել է 2015 թվականի նոյեմբերի 24-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի համաձայն իր մեջ ներառելով նախկին Թումանյան, Աթան, Ահնիձոր, Լորուտ, Մարց, Շամուտ, Քարինջ համայնքները: Միավորվելուց հետո ընդհանուր բնակչությունը կազմել է 4621 մարդ, իսկ տարածքը 30,8 քառ կմ:[35] Նոր ձևավորված համայնքում ընդհանուր բյուջեն սկսել է դինամիկ աճել: Գծապատկեր 49-ում ներկայացված է միավորված համայնքների բյուջեները մինչ խոշորացվելը և խոշորացվելու հետո:

Գծապատկեր 43. Թումանյան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքների 2014-2017թթ կատարված և 2018թ-ին պլանավորված բյուջեները/հազ դ/



Ինչպես տեսնում ենք մինչ միավորվելը համայնքների բյուջեների գումարային ցուցանիշն ավելի մեծ է եղել քան միավորվելուց հետո: 2016 թ-ին կտրուկ անկում է նկատվում միասնական բյուջեում՝ մոտ 19%, և միայն 2018 թ-ի պլանային ցուցանիշով նոր աճ է նկատվում: Քանի որ 2016 թ-ին տեղի է ունեցել դոտացիաների տրամադրման հաշվարկի մեթոդաբանության փոփոխություն դիտարկենք նաև դոտացիաների դինամիկան նշված ժամանակահատվածում:

Գծապատկեր 42. Թումանյան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներին պետբյուջեից տրամադրվող դոտացիաները 2014-2018թթ/հազ դ

[35] http://lori.mtad.am/about-communities/466/



Գծապատկերից երևում է, որ դոտացիաների մասով նվազում եղել է 2016 թ-ին՝ 5,4%, և 2017 թ-ին այն կրկին աճել է: Ստացվում է, որ նվազումը պայմանավորված է եղել դոտացիաներով: Սեփական եկամուտների հավաքագրելիության աճը նկատվում է 2017 և 2018թթ:_Անդրադառնալով հետազոտության խնդիրներին դիտարկենք ուսումնասիրվող ոլորտներին հատկացվող ֆինանսական միջոցներին և կատարվող աշխատանքներին:

Նշենք, որ համայնքապետարանից ստացված՝ աղբահանության ոլորտին վերաբերող ցուցանիշները այս դեպքում ևս չէր համապատասխանում Լոռու մարզպետարանում և Տարածքային կառավարման նախարարության կայքում տեղադրված տվյալներին, ուստի որպես հիմք վերցրել ենք Տարածքային կառավարման նախարարության կայքէջում տեղադրված տվյալները:

Գծապատկեր 43. Թումանյան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներում աղբահանության ոլորտին հատկացվող ֆինանսական միջոցները 2014-2018թթ հազ. դրամ



Գծապատկերից նկատում ենք, որ աղբահանության ոլորտում ծախս՝ տրամաբանորեն նաև աշխատանքներ մինչ միավորումն իրականացվել է միայն Թումանյան համայնքում: Մարց համայնքում՝ 2014 և 2015թթ համապատասխանաբար 2300 ՀՀ դրամ և 5000 ՀՀ դրամ:

Չնայած ոլորտային ծախսերը բացարձակ թվով աճել են, բայց Թումանյան համայնքի բյուջեում 2014-2018թթ տեսակարար կշիռը նվազել է՝ համապատասխանաբար կազմելով 9%, 6,9%, 6,5%, 13% և 3,4%:

Միավորումից հետո ոլորտին հատկացվող ֆինանսական միջոցները մեծացել են, ինչը ենթադրում է մեկ բնակչի հաշվով կատարված ծախսի ավելացում ևս, որն այլ հավասար պայմաններում նշնակում է տարբեր բնակավայրերի միջև գումարների բաշխում՝ ըստ բնակչության թվաքանակի:

Գծապատկեր 44.Թումանյան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներում աղբահանության ոլորտում 2014-2017թթ պլանավորված և 2018թ-ին կատարված ծախսերը մեկ բնակչի հաշվով/հազ դ.



Մեկ բնակչի հաշվով ծախսերը 2016 թ-ին նվազել են նախորդ տարիների համեմատ, և սա պարզ հանրահաշվական գործողության արդյունքում է ստացվում՝ բնակչների թվաքանակի մեծացման պատճառով: 2016 թ-ի համեմատ 2017 թ-ին 153% մեծացել է, իսկ 2018 թ-ին 67% քիչ է պլանավորվել՝ դինամիկայում գրանցելով ամենացածր ցուցանիշը: Քանի որ համայնքապետարանից ստացված տվյալներում կար անճշտություններ չենք կարող ներկայացնել թե կոնկրետ ինչ աշխատանքների կրճատում է պայմանավորված 2018 թ-ին քիչ պլանավորված: Տարածքային կառավարման նախարարության կայքում արտացոլված տվյալներից պարզ է դառնում, որ 2014-2018 թթ կատարված աշխատանքներն ամբողջությամբ եղել են վարչական բնույթի ընթացիկ ծախսեր: Հարկ է նաև նշենք, որ համայնքապետարանից ստացված տվյալների համաձայն ոլորտային ծախսերի 70%-ից ավելին եղել են աշխատավարձեր: Համաձայն մեր կողմից իրականացված սոցհարցման արդյունքների Թումանյան բնակավայրում աղբամաններ չկան, աղբը հեռացվում է շրջիկ մեքենայի միջոցով, շրջիկ մեքենայով աղբահեռացման մասին նշել են նաև Լորուտ և Քարինջ բնակավայրերում[36]: Այստեղ պարզ է դառնում, որ համայնքի ունեցած 2 աղբատար մեքենա[37]յի դեպքում ֆինանսական միջոցներն ընթացիկ ծախսվում են աշխատավարձի և մեքենայի վառելիքի տեսքով, այնինչ կարելի է ավելի օպտիմալ լուծում գտնել՝ աղբամանների ավելացման և տրանսպորտային նյութերի և վառելիքի գնի նվազեցման միջոցով:

Տվյալներ կարողացել ենք վերցնել նաև Թումանյան համայնքի 2018 թ ՏԱՊ-ից: Համաձայն ՏԱՊ-ի Թումանյան համայնքում նախատեսվում է սանիտարական

[36] «ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ՝ ՀԱՆՈՒՆ ԽԵԼԱՑԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ» Աղբահանության զեկույց էջ 48
[37] http://lori.mtad.am/files/docs/32978.pdf ՏԱՊ 2018 էջ 22

մաքրման աշխատանքներ իրականացնել՝ Թումանյան բնակավայրում ամսեկան 8 անգամ, մյուս բնակավայրերում ամսեկան 3 անգամ երկու աշխատակիցներով:[38]

Համաձայն ՏԱՊ-ի նախատեսվում է նաև աղբահանության իրականացման դիմաց վճարներ գանձել՝ 100 դրամ: Բյուջեով նախատեսված հավաքագրվող գումարի չափը կազմում է 3,431 հազ դրամ: Նշենք, որ նախորդ տարիներին աղբահանության վճարներ չեն գանձվել: Ուշագրավ է, որ ՏԱՊ-ում 2018 թ-ի ընթացքում աղբահանության աշխատանքների համար համայնքային բյուջեից նախատեսված է 17 մլն ՀՀ դրամ[39], որը մոտավորապես համընկնում է այն ցուցանիշին ինչ համայնքապետարանից մեզ ներկայացվել է: Այստեղ մասնագիտական թերացման խնդիր է նկատվում, որի պատճառով ծախսը համապատասխան հոդվածներում չի ներկայացվում և տարբեր աղբյուրներում տարբեր ցուցանիշների ենք հանդիպում:

Լուսավորության ոլորտում ևս մինչ միավորումը ծախսեր իրականացվել են միայն Թումանյան համայնքում:

Գծապատկեր 45. Թումանյան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներում լուսավորության ոլորտում 2014-2017թթ կատարված և 2018թ-ին պլանավորված ծախսերը/հազ դ



Միավորումից հետո ոլորտին հատկացվող ծախսերը կտրուկ աճել են՝ 2016 թ-ին 2015 թ-ի համեմատ 121 %-ով: Սակայն ընդհանուր բյուջեում ունեցած

[38] http://lori.mtad.am/files/docs/32978.pdf էջ 23
[39] http://lori.mtad.am/files/docs/32978.pdf էջ 8

տեսակարար կշիռը չի փոխվել. 2014-2018թթ համապատասխանաբար կազմել է 4%, 2%, 2%, 2,2% և 2,7%:

Բացարձակ ցուցանիշների աճի արդյունքում ավելացված աշխատանքների բնույթը հասկանալու համար դիտարկենք ծախսերն ըստ բյուջեի վարչական և ֆոնդային մասերի՝

Աղյուսակ 20.Թումանյան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներում լուսավորության ոլորտին հատկացվող ֆինանսական միջոցները ըստ բյուջեի վարչական և ֆոնդային մասերի 2014-2018թթ

		Թումանյան	Աթան	Ահնիձոր	Լորուտ	Շամուտ	Մարց	Քարինջ
2014	Վարչ. %	53						
	Ֆոնդ. %	47						
	Ընդ/հազ դ	*1309,6*						
2015	Վարչ. %	100						
	Ֆոնդ. %	0						
	Ընդ/հազ դ	*1018,2*						
2016	Վարչ. %	100						
	Ֆոնդ. %	0						
	Ընդ/հազ դ	*2250*						
2017	Վարչ. %	100						
	Ֆոնդ. %	0						
	Ընդ/հազ դ	*2550*						
2018	Վարչ. %	72						
	Ֆոնդ. %	28						
	Ընդ/հազ դ	*3520*						

Ինչպես տեսնում ենք կապիտալ բնույթի ծախսեր իրականացվել են 2015թ-ին և նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին: Համաձայն Թումանյանի 2018թ-ի ՏԱՊ-ի համայնքում նախատեսվում է Թումանյան և Մարց բնակավայրերում լուսավորության ցանցի ընդլայնում և հենասյուների ներկում, որը համաձյան ՏԱՊ—ի արժենալու է 550 հազ դրամ՝ 5 լուսավորող հենասյուներ և 27 հենասյուներ ներկելու համար[40]: Մեր կողմից իրականացված դիտարկումների ժամանակ պարզվել է, որ Թումանյան, Լորուտ և Մարց բնակավայրերը գիշերային լուսավորությունով ապահովված են[41]: Ըստ այդմ դիտարկենք մեկ բնակչի հաշվով կատարված ծախսերը 2014-2018թթ՝

[40] http://lori.mtad.am/files/docs/32978.pdf էջ7, 39

[41] «ՄԱՄՆԱԿՑԱՅԻՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ՝ ՀԱՆՈՒՆ ԽԵԼԱՑԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ» «Լուսավորության զեկույց» էջ 54

Գծապատկեր 46. Թումանյան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներում լուսավորության ոլորտին հատկացվող ֆինանսական միջոցները մեկ բնակչի հաշվով 2014-2018թթ/ հազ դ



Կապույտ գծով նշված է միավորումից հետո ամբողջ համայնքի բնակչության թվով հաշված ցուցանիշը, իսկ կարմիրով միայն այն համայնքների բնակիչների թվով հաշված ցուցանիշը, որոնցում որ լուսավորությունն ապահովվել է: Գծապատկերից երևում է, որ լուսավորության ոլորտի ծախսերը 2016-2018թթ մեկ բնակչի հաշվով աճել է՝ մինչ 2017 թ-ը: Համայնքների միավորումը թույլ է տվել միավորված փոքր համայնքների բյուջետային միջոցների հաշվին Թումանյան բնակավայրում բարելավել գիշերային լուսավորությունը. հիշենք, որ նոր ձևավորված համայնքի ընդհանուր բյուջեն նվազել էր:

Անդրադառնալով ճանապարհաշինությանը պետք է նշենք, որ ի տարբերություն լուսավորության ու աղբահանության ոլորտում կատարվող աշխատանքների մինչ խոշորացումը գրեթե բոլոր համայնքներում/բացառությամբ Ահնիձորի/ իրականացվել են ճանապարհաշինական աշխատանքներ:

Գծապատկեր 47. Թումանյան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներում ճանապարհաշինության ոլորտին հատկացվող ֆինանսական միջոցները 2014-2018թթ/հազ դ



Ոլորտին հատկացվող ծախսերը խիստ տատանվող են եղել՝ 2017 թ-ին ընհանրապես ծախս չի եղել, իսկ 2018-ին պլանավորվել է նախորդ տարիներից 4-6 անգամ շատ ծախս կատարել: Դիտարկելով ըստ վարչական և ֆոնդային մասերի նկատում ենք, որ բացի Թումանյան բնակավայրից մյուս համայնքներում կատարված ծախսերը եղել են ընթացիկ բնույթի ծախսեր: Թումանյան բնակավայրում 2014 թ-ին իրականացվել են միայն կապիտալ բնույթի ծախսեր, 2015 թ-ին միայն վարչական, 2016 և 2018 թթ և՛ վարկան և ֆոնդային (համամասնությունները տես Աղյուսակ 21-ում)

Աղյուսակ 21.Թումանյան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներում ճանապարհաշինության ոլորտին հատկացվող ֆինանսական միջոցները ըստ բյուջեի վարչական և ֆոնդային մասերի 2014-2018թթ

		Թումանյան	Աթան	Ահնիձոր	Լորուտ	Շամուտ	Մարց	Քարինջ
2014	Վարչ. %	0	100		100		100	
	Ֆոնդ. %	100	0		0		0	
	Ընդ/հազ դ	*649,6*	*320*		*198*		*355,8*	
2015	Վարչ. %	0	100		100	100	100	100
	Ֆոնդ. %	100	0		0	0	0	0
	Ընդ/հազ դ	*564*	*150*		*200*	*156,7*	*300*	*600*
2016	Վարչ. %	10						
	Ֆոնդ. %	90						
	Ընդ/հազ դ	*2433,1*						
2017	Վարչ. %							
	Ֆոնդ. %							
	Ընդ/հազ դ							
2018	Վարչ. %	62						
	Ֆոնդ. %	38						

	Ընդ/հազ դ	*12900*						

Թումանյան համայնքի 2018թ ՏԱՊ-ից երևում է, որ նախատեսվում է միջբնակավայրային ճանապարհ կառուցել՝ Ահնիձոր-Աթան բնակավայրերի համար, որն արժենալու է 500 հազ դրամ[42]: Սակայն ներբնակավայրային ճանապարհներից նախատեսված է միայն Թումանյան համայնքում իրականացնել վերանորոգման աշխատանքներ՝ 70 քառ մ՝ 1,3 մլն ՀՀ դրամ:[43] Ստացվում է, որ մյուս բնակավայրերը կրկին անտեսված են մնում: Այս դեպքում ևս մեկ բնակչի հաշվով ծախսերը ոչ ստույգ ինֆորմացիա են տալիս՝

Գծապատկեր 48. Թումանյան խոշորացված և վերջինիս վարչատարածքային սահմաններում ներառված նախկին համայնքներում ճանապարհաշինության ոլորտին 2014-2017 թթ հատկացված և 2018թ պլանավորված ֆինանսական միջոցները մեկ բնակչի հաշվով/հազ դ



Այնուամենայնիվ, նկատում ենք, որ 2018 թ-ին ճանապարհաշինության ոլորտում կտրուկ աճել է մեկ բնակչի հաշվով ծախսը՝ անգամ այն դեպքում, երբ որպես բնակչության թիվ վերցվել են բոլոր բնակավայրերի բնակիչների ամբողջական թիվը, այլ ոչ այն բնակավայրերի որտեղ իրականացվել են ճանապարհաշինական աշխատանքներ: Նշենք նաև, որ ըստ մեր կողմից իրականացված հարցումների բոլոր բնակավայրերում ճանապարհների բարեկարգ լինելու հարցը բնակիչները գնահատել են 75% և ավել, իսկ Ահնիձոր, Լորուտ և Շամուտ բնակավայրերում խնդրի կարևորությունը 100% է գնահատվել:

[42] http://lori.mtad.am/files/docs/32978.pdf էջ 7
[43] http://lori.mtad.am/files/docs/32978.pdf էջ 16

Եզրակացություն և առաջարկություններ

- Համայնքային բյուջեները միավորումից հետո աճել են՝ ընդ որում սեփական եկամուտների մասով: Դա կարող է պայմանավորված լինել նրանով որ համայնքապետը չլինելով չխոշորացված համայնքից կաշկանդված չէ հավաքագրել միջոցները մինչդեռ գյուղապետերը նախկինում կանշկանդված էին սեփական համայնքի բնակիչների հետ հարաբերություններում: Սա կարող է լինել նաև բնակավայրերի ներկայացուցիչների մոտ պատասխանատվության և սրտացավ մոտեցման արդյունք, քանի որ խոշորացումից հետո որոշում կայացնողները իրենք չեն, և իրենց բնակավայրում աշխատանքներ իրականացնելու համար առավել մոտիվացված են եկամուտների հավաքագրման բարձր մակարդակ ապահովելու համար: Մյուս կողմից սա կարող է լինել կոռուպցիոն ռիսկերի նվազեցման կամ բացառման արդյունք:
- Դիտարկված գրեթե բոլոր համայնքներում ոլորտային ծախսերն ավելացել են, սակայն դրանց կշիռն ընդհանուր համայնքի բյուջեում նվազել է:
- Գրեթե բոլոր միավորված համայնքերում վերջին երկու տարում ավելացել է կապիտալ ծախսերի տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում, որը անշուշտ դրական ցուցանիշ է և խոսում է համայնքներում նյութական արժեքների ստեղծման վերաբերյալ:
- Մեր կողմից իրականացված հարցումները համադրելով ոլորտային ծախսերի հետ նկատում ենք, որ դժգոհությունն առավել արտահայտիչ է այն բնակավայրերում որտեղ այդ ոլորտներում ծախսեր չեն իրականացվում: Ոլորտային ծախսերն իրականացնելիս անհրաժեշտ է գնահատել բոլոր բնակավայրերում առկա խնդիրների առաջնահերթությունները, դրանք համադրել բնակչության կարծիքի հետ և ըստ այդմ իրականացնել ծախսերը:
- Համայնքների միավորումից հետո Ախուրյան և Նոյեմբերյան համայնքներում բյուջեները դեռևս շարունակում են պլնավորել ըստ նախկին համայնքների՝ «սև հաշվապահություն» և «սպիտակ հաշվապահություն» տրամաբանությամբ: Միասնականությունը դեռևս սկզբունք չի դարձել այս համայնքներում: Անկախ ըստ բնակավայրերի եկամուտների հավաքագրելիությունից անհրաժեշտ է միասնական մոտեցում ցուցաբերել:
- Ուսումնասիրության ընթացքում հանդիպեցինք տվյալների անճշգրտությունների, որոնք մասնագիտական թերացման խնդիրներ են: Համայնքների ֆինանսական բաժնի աշխատակիցների մասնագիտական գիտելիքները համապատասխանեցնելու համար անհրաժեշտ է դասընթացներ կազմակերպել:
- Միավորված համայնքներում ծառայություններին հատկացվող ծախսերի բաշխվածություն է նկատվում, այսուհանդերձ այն համայնքերը որոնք նախկինում առանձին ծառայությունների մասով կարող է և գերազանցեին խոշորացված համայնքի կենտրոնին, ապա հիմա դա չի նկատվում, որը խոսում է կայացած համայնքներում խոշորացումից հետո մեկ շնչին բաժին ընկնող ծախսերի կրճատում: Համայնքների կայքէջերում չկան գնումների պայմանագրեր: Թումանյան և Նոյեմբերյան համայնքների կայքէջերում ծախսերի կատարողական բաժնում ծախսերը մասամբ են տարբերակվել ըստ գործառնական նշանակության:

Համայնքների բյուջեների արխիվներ հնարավոր չէ գտնել (Նոյեմբերյան, Աշոցք, Ստեփանավան)։ Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել կայքէջերի պատշաճ գործունեությանը, քանի որ վերջինս թափանցիկության ապահովման թիվ մեկ գործիքն է։